ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵՐՎԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՍԵՐՎԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 911.3:338.4 (072)
ԳՄԴ 26.8+65.9(2)442
Ս 259

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը

ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
Ս 259 «Սերվիսի աշխարհագրություն» դասընթացի ուսումնական պրակտիկայի և գործնական պարապմունքների կազմակերպման մեթոդական ուղեցույց, Տիգրան Սարգսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2014, 72 էջ:

Մեթոդական ուղեցույցում ներկայացված են «Սերվիսի աշխարհագրություն» դասընթացի գործնական աշխատանքների և ուսումնական պրակտիկայի կազմակերպման որոշ մեթոդական ցուցումներ և մոտեցումներ, ինչպես նաև դասընթացի ծրագիրը, հասկացությունների համառոտ բացատրական բառարան և ընթացիկ քննությունների կազմակերպման թեստային առաջադրանքների նմուշ-օրինակներ:

Ուղեցույցը կարող է օգտակար լինել ինչպես «Սերվիսի աշխարհագրություն» առարկան դասավանդող և գործնական պարապմունքները կազմակերպող դասախոսների, այնպես էլ ուսումնական պրակտիկայի ղեկավարների և ուսանողների համար:

ՀՏԴ 911.3:338.4 (072)
ԳՄԴ 26.8+65.9(2)442

ISBN 978-5-8084-1925-4

© ԵՊՀ հրատարակչություն, 2014
© Տիգրան Սարգսյան, 2014

ՆԱԽԱԲԱՆ

20-րդ դարի 2-րդ կեսը նշանավորվեց աշխարհագրական գիտությունների համակարգի զարգացման մի ուղղության՝ սոցիոլոգայնացման սկզբնավորմամբ: Մասնավորապես ավելացավ ուշադրությունը մարդու պահանջմունքների և դրանց բավարարման ուղիների ու տարածական առանձնահատկությունների նկատմամբ: Սոցիոլոգայնացումը, էկոլոգայնացման և մաթեմատայնացման հետ մեկտեղ, աշխարհագրական գիտության զարգացման արդի առանցքային միտումներից է:

Զուգահեռաբար տնտեսագիտության, մարքեթինգի և հոգեբանության շփման գոտում ձևավորվեց գիտության նոր ճյուղ՝ սերվիսաբանությունը (սերվիսոլոգիան): Այն համալիր կերպով ուսումնասիրում է մարդկանց պահանջմունքները և դրանց բավարարման (սերվիսային գործունեություն, ծառայությունների մատուցում) ընդհանուր օրենքներն ու օրինաչափությունները:

Պատահական չէ, որ վերոնշյալ գործընթացների արդյունքում հասարակական՝ սոցիալ-տնտեսական աշխարհագրության շրջանակներում ձևավորվեց գիտության մի նոր ուղղություն՝ սերվիսի աշխարհագրությունը (աշխարհագրության և սերվիսաբանության փոխշփման և փոխներթափանցման հատվածում):

Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում «Սերվիսի աշխարհագրություն» առարկան դասավանդվում է 2009-2010 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից («Սերվիս» մասնագիտության բակալավրիատի 1-ին կուրսում):

Սերվիսի աշխարհագրության հաջող դասավանդման կարևոր նախապայմաններից է ուսանողների մոտ սերվիսաբանական և աշխարհագրական ելակետային գիտելիքների առկայությունը: «Սերվիս» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողների մոտ դրանք ձևավորվում են հետևյալ դասընթացների շրջանակներում.

- Սոցիալ-մշակութային ծառայության և զբոսաշրջության ներածություն, 1-ին կիսամյակ, 48 ժ, 4 կրեդիտ,
- Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, 2-րդ կիսամյակ, 32 ժ, 3 կրեդիտ,
- Սերվիսի հիմունքներ, 1-ին կիսամյակ, 32 ժ, 3 կրեդիտ:

Տվյալ աշխատանքում ներկայացված են «Սերվիսի աշխարհագրություն» առարկայի գործնական պարապմունքների և ուսումնական պրակտիկայի կազմակերպման օրինակներ ու մեթոդական ցուցումներ: Դրանք առավել օգտակար և ամբողջական դարձնելու նպատակով ներկայացվում են առարկայի՝ մեր կողմից կազմված ծրագիրը և դասավանդման մեթոդների ու դրանց կիրառման ուղիների նկարագրությունը:

Հավելվածներում տրված են ընթացիկ քննությունների թեստային առաջադրանքների նմուշ-առաջարկները, ինչպես նաև մասնագիտական հասկացությունների համառոտ բացատրական բառարան:

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ընդհանուր տեղեկություններ

Մասնագիտությունը՝ «Սերվիս» (բակալավրիատ)
Կուրսը՝ 1-ին
Կիսամյակը՝ 2-րդ
Ընդհանուր ժամաքանակը՝ 32 ժ, որից՝
Դասախոսություններ՝ 24 ժ
Գործնական պարապմունքներ՝ 8 ժ
ECTS կրեդիտների քանակը՝ 3

Դասընթացի նպատակը

Ուսանողներին համակարգված գիտելիքներ հաղորդել սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների առանձնահատկությունների, ծառայությունների առանձին տեսակների տարածքային կազմակերպման սկզբունքների և դրանց գործնական կիրառման հնարավորությունների վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները

1. Վերհանել և վերլուծել ծառայությունների և դրանց կազմակերպման գիտական-աշխարհագրական ուսումնասիրությունների առանձնահատկությունները,
2. Պարզել սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը, գործոններն ու սկզբունքները, ընդհանուր օրինաչափությունները,

3. Ծանոթացնել սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտին, առարկային, մեթոդներին, միջգիտական կապերին և առնչություններին,

4. Ներկայացնել սոցիալ-մշակութային ծառայությունների հիմնական տեսակների տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:

Ակնկալվող կրթական վերջնարդյունքները

Մասնագիտական տեսական գիտելիքներ

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Ծանոթ կլինի սերվիսի աշխարհագրության բովանդակությանը, խնդիրներին, ուսումնասիրության օբյեկտին և առարկային, կառուցվածքին, գիտությունների համակարգում ունեցած տեղին և միջգիտական կապերին,

2. Կհասկանա սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը, մակարդակները, գործոնները,

3. Կիմանա սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների առանձնահատկությունների, հիմնական հարցերի և ուղղությունների մասին,

4. Ծանոթ կլինի սոցիալ-մշակութային ծառայությունների առանձին տեսակների զարգացման և տարածքային կազմակերպման առանձնահատկություններին:

Մասնագիտական գործնական կարողություններ

Տվյալ դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Գնահատել սպասարկման ոլորտի օպտիմալ և նպատակային տարածքային կազմակերպման գործնական կարևորությունը՝ կոնկրետ օրինակներով,

2. Կատարել սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման մակարդակների համադրություն և վերլուծություն,

3. Գործնականում կիրառել սերվիսի աշխարհագրության ուսումնասիրությունների մեթոդները (քանակական-վիճակագրական, մաթեմատիկական, քարտեզագրական, նկարագրական, համեմատական-աշխարհագրական և այլն),

4. Պայմանական տարածքի համար մշակել սոցիալ-մշակութային սպասարկման ոլորտի աշխարհագրական վերլուծության ծրագրի նախագիծ, հիմնավորել հեռանկարային զարգացման ուղղությունները,

5. Գնահատել սպասարկման որակն ու մակարդակը՝ ելնելով կոնկրետ տարածքի բնակչության պահանջմունքների առանձնահատկություններից:

Գնահատումը

Դասընթացն ավարտվում է եզրափակիչ գնահատմամբ: Նախատեսվում է 2 գրավոր ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրի արժեքը՝ 1 միավոր, քայլը՝ 0.5 միավոր: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը 2.5 միավոր արժեքով:

Դասընթացի թեմատիկ բովանդակությունը և կառուցվածքը

Թեմա 1. *Սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունները (4 ժամ)*

Բովանդակությունը: «Սերվիսային գործունեություն», «սերվիս», «սպասարկում», «ծառայություն», «ծառայությունների մատուցում», «սպասարկման (սերվիսի) ոլորտ» հասկացությունների վերլուծությունը:

Սերվիսաբանության՝ որպես գիտության ձևավորումը: Միջճյուղային մոտեցումը սպասարկման ոլորտի գիտական ուսումնասիրություններում՝ պատմական, մշակութաբանական, տնտեսագիտական և մարքեթինգային, իրավագիտական, սոցիալ-հոգեբանական, կառավարչական և աշխարհագրական մոտեցումները:

Աշխարհագրության սոցիոլոգայնացման երևույթը, մարդկանց պահանջմունքների և դրանց բավարարման տարածական-աշխարհագրական առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Պահանջմունքների և ծառայությունների աշխարհագրական ուսումնասիրությունների հիմնական ասպեկտները կամ ուղղությունները՝ բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսաաշխարհագրական, համալիր-միջճյուղային (գեոէկոլոգիական, բժշկաաշխարհագրական և այլն):

Սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների ցուցանիշները (բացարձակ, հարաբերական ու ինտեգրալ) և հիմնական հարցերը:

Ինքնաստուգման հարցերի օրինակներ

1. Ո՞րն է սպասարկման ոլորտի գիտական ուսումնասիրությունների միջճյուղային մոտեցման էությունը:
2. Ո՞րն է աշխարհագրության սոցիոլոգայնացման էությունը:

3. Որո՞նք են սերվիսի ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների հիմնական ասպեկտները:

4. Նշեք սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների ժամանակ օգտագործվող ցուցանիշները, բերե՛ք օրինակներ:

5. Թվե՛ք սպասարկման ոլորտի աշխարհագրական հետազոտությունների ժամանակ կարևորվող հիմնական հարցերը:

Թեմա 2. *Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը, գործոնները, մակարդակները (4 ժամ)*

Բովանդակությունը: «Տարածքային տեղաբաշխում» և «տարածքային կազմակերպում» հասկացությունների վերլուծությունը: Հասարակության տարածքային կազմակերպումը՝ որպես գործընթաց և, միաժամանակ, գործընթացի արդյունք: Հասարակության տարածքային կառուցվածք:

Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը՝ սպասարկման օբյեկտների, ձեռնարկությունների, մատուցվող ծառայությունների տարածական տեղաբաշխումն ու դրանց միջև փոխադարձ տարածական կապերի ձևավորումը:

Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման մակարդակները (ռեգիոնալ-մարզային, շրջանային, տեղական-լոկալ), գործոնները (սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, աշխատանքային ռեսուրսների, տրանսպորտային, տարաբնակեցման, բնական):

«Տարածքային համակարգ» հասկացությունը: Սպասարկման ոլորտի տարածքային համակարգերը՝ տարածականորեն կազմակերպված օբյեկտների փոխկապակցված ցանցերն ու համակարգերը:

Ինքնաստուգման հարցերի օրինակներ

1. Բացատրե՛ք հասարակության տարածքային կազմակերպման՝ որպես գործընթացի և գործընթացի արդյունքի էությունը:

2. Ո՞րն է սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը:

3. Որո՞նք են սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման մակարդակներն ու գործոնները:

4. Ի՞նչ է սպասարկման ոլորտի տարածքային համակարգը:

Թեմա 3. *Սերվիսի աշխարհագրությունը՝ որպես գիտություն (4 ժամ)*

Բովանդակությունը: Ուսումնասիրության օբյեկտ և առարկա: Օբյեկտը՝ որպես առարկա՝ լայն իմաստով, առարկան՝ որպես օբյեկտ՝ նեղ իմաստով:

Հասարակական աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտը (մարդկային հասարակություն), առարկան (հասարակության տարածքային կազմակերպում), ճյուղային կառուցվածքը (ըստ Շարիգինի, Գոլուբչիկի, Վալեսյանի և այլոց):

Սերվիսի աշխարհագրության օբյեկտը (սպասարկման ոլորտ), առարկան (սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպում), հիմնական խնդիրներն ըստ Կովալյովի, Աբրամովի և այլ հեղինակների:

Սերվիսի աշխարհագրության տեղը գիտությունների համակարգում (ընդհանրապես) և աշխարհագրական գիտությունների համակարգում (մասնավորապես), առնչություններն աշխարհագրական և ոչ աշխարհագրական գիտությունների հետ:

Սերվիսի աշխարհագրության հիմնական ճյուղային բաղադրիչները՝ զբոսաշրջային ծառայությունների, սանատոր-առող-

ջարանային ծառայությունների և կուրորտների, հյուրանոցային օբյեկտների և ինդուստրիայի, ուղևորատրանսպորտային համակարգերի և ծառայությունների աշխարհագրություն: Հեռանկարային ուղղությունները՝ հոգևոր-մշակութային, գիտակրթական, ֆինանսաբանկային ծառայությունների աշխարհագրություն:

Ինքնաստուգման հարցերի օրինակներ

1. Բացատրե՛ք ուսումնասիրության օբյեկտի և առարկայի տարբերությունները:
2. Ո՞րն է հասարակական աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան: Որո՞նք են նրա հիմնական ճյուղային բաղադրիչները:
3. Նշե՛ք սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան:
4. Ներկայացրե՛ք սերվիսի աշխարհագրության տեղը աշխարհագրական գիտությունների համակարգում (մասնավորապես հասարակական աշխարհագրության կառուցվածքում):
5. Ներկայացրե՛ք սերվիսի աշխարհագրության կապերն աշխարհագրական և ոչ աշխարհագրական գիտությունների հետ:
6. Որո՞նք են սերվիսի աշխարհագրության հիմնական ճյուղային բաղադրիչները:

Թեմա 4. *Սերվիսի աշխարհագրության հետազոտության մեթոդները (4 ժամ)*

Բովանդակությունը: Մեթոդների էությունը, տեսակները, դասակարգումը: Համագիտական, կոնկրետ-գիտական և տեղեկատվության հավաքման մեթոդներ: Մեթոդիկա, մեթոդաբանություն:

Աշխարհագրության մեթոդական համակարգը՝ համաաշխարհագրական և կոնկրետ-ճյուղային աշխարհագրական մեթոդներ:

Նկարագրական մեթոդի կիրառությունը սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրություններում: Զբոսաշրջային նկարագրություն, համալիր զբոսաշրջային և սերվիսային երկրագրական նկարագրություն:

Քանակական-վիճակագրական և մաթեմատիկական մեթոդները՝ սերվիսի աշխարհագրության շրջանակներում:

Համեմատական-աշխարհագրական, պատմական, աշխարհատեղեկատվական մեթոդների կիրառությունը սերվիսի աշխարհագրական հետազոտություններում:

Քարտեզագրումը՝ որպես սպասարկման ոլորտի զարգացման և տարածքային կազմակերպման օրինաչափությունների ուսումնասիրման ունիվերսալ մեթոդ: Սերվիսի ոլորտի թեմատիկ քարտեզներն ու դրանց գործնական կիրառությունը:

Տեղեկատվության հավաքման մեթոդները և աղբյուրները սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրություններում:

Ինքնաստուգման հարցերի օրինակներ

1. Ի՞նչ է գիտական հետազոտության մեթոդը: Որո՞նք են մեթոդների հիմնական խմբերն ու տեսակները:

2. Որո՞նք են նկարագրական մեթոդի դերն ու կիրառությունը սերվիսի աշխարհագրության մեջ:

3. Կոնկրետ օրինակներով ներկայացրե՛ք սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրություններում քանակական և մաթեմատիկական մեթոդների կիրառման հնարավորություններն ու ուղղությունները:

4. Բերե՛ք սերվիսի ոլորտի թեմատիկ աշխարհագրական քարտեզների օրինակներ: Ներկայացրե՛ք աշխարհատեղեկատվական մեթոդի էությունն ու նշանակությունը:

5. Որո՞նք են համեմատական-աշխարհագրական և պատմական մեթոդների կիրառման ուղիները:

Թեմա 5. *Զբոսաշրջային և սանատոր-կուրորտային ծառայությունների աշխարհագրություն (4 ժամ)*

Բովանդակությունը: Զբոսաշրջագիտությունը՝ որպես համալիր բնահասարակական գիտություն: Զբոսաշրջության աշխարհագրական ուսումնասիրությունները, զբոսաշրջային երկրագրություն: Զբոսաշրջության աշխարհագրությունն ըստ Սամոյլենկոյի, Ալեքսանդրովայի և այլ հեղինակների: Ուսումնասիրության օբյեկտն ու առարկան:

Զբոսաշրջային ծառայությունների էությունը, տարածքային կազմակերպումը՝ մակրոռեգիոններ (խոշոր տարածաշրջաններ), ռեգիոններ (տարածաշրջաններ), շրջաններ, գոտիներ-զոնաներ և կլաստերներ:

Զբոսաշրջության զարգացման և տարածքային կազմակերպման գործոնները (բնական, սոցիալ-տնտեսական, տրանսպորտային և ենթակառուցվածքային, պատմամշակութային), խոչընդոտները (բնական, աշխարհաքաղաքական, անվտանգության, սոցիալ-տնտեսական և այլն):

Սանատոր-կուրորտային ծառայությունների էությունը, նպատակները, տեղաբաշխման և կազմակերպման գործոնները:

Կուրորտոլոգիա և բալնեոլոգիա գիտությունները: Բնական-բուժիչ գործոններն ու դրանց խմբերը: Կուրորտներ, տեսակները՝ բալնեոլոգիական, լեռնակլիմայական, ցեխային, խառը-համակցված: Ծովաբուժական-տալլասոթերապևտիկ, սպա կուրորտներ:

Համաշխարհային նշանակության կուրորտային գոտիների աշխարհագրությունը:

Ինքնաստուգման հարցերի օրինակներ

1. Տվե՛ք զբոսաշրջագիտության և զբոսաշրջության աշխարհագրության բնորոշումները, նշեք դրանց ուսումնասիրության օբյեկտն ու առարկաները:

2. Թվե՛ք զբոսաշրջային ծառայությունների տարածքային կազմակերպման մակարդակները: Բերե՛ք կոնկրետ օրինակներ:

3. Որո՞նք են զբոսաշրջության զարգացման և տարածքային կազմակերպման գործոնները, խոչընդոտներն ու մարտահրավերները:

4. Որո՞նք են սանատոր-առողջարանային ծառայությունների նպատակներն ու առանձնահատկությունները:

5. Ի՞նչ է կուրորտը: Որո՞նք են կուրորտների հիմնական տեսակները:

6. Թվե՛ք բնական-բուժական ռեսուրսների հիմնական խմբերն ու տեսակները:

7. Ո՞րն է «բալնեոլոգիա» և «կուրորտոլոգիա» գիտությունների բնորոշումը:

8. Ներկայացրե՛ք բալնեոլոգիական և լեռնակլիմայական կուրորտների աշխարհագրական տարածումը:

Թեմա 6. *Հյուրանոցային և ուղևորաշրջանապորտային ծառայությունների աշխարհագրություն (4 ժամ)*

Բովանդակությունը: Հյուրանոցային ծառայությունների և ինդուստրիայի էությունը, զարգացման արդի միտումները, տեղաբաշխման առանձնահատկությունները և գործոնները: Հյուրանոցային ինդուստրիայի աշխարհագրությունը՝ որպես գիտաճյուղ:

Համաշխարհային հյուրանոցային տնտեսության աշխարհագրական կառուցվածքն ըստ հիմնական տարածաշրջանների (Եվրոպա, Ամերիկա, Ասիա, Աֆրիկա, Ավստրալիա և Օվկիանիա) և առանձին երկրների:

Հյուրանոցային ոլորտի գլոբալացումը և միջազգային հյուրանոցային ցանցերի ձևավորումը: Նյութընկալության կազմակերպման ռեգիոնալ մոդելները:

Ուղևորատրանսպորտային ծառայություններ. դերն ու նշանակությունը սոցիալ-մշակութային սպասարկման ոլորտում: Աշխարհագրական ուսումնասիրությունները: Տրանսպորտային ուղիներ և հանգույցներ: Աշխարհի խոշորագույն միջազգային օդանավակայաններն ու երկաթուղային կայարանները:

Ինքնաստուգման հարցերի օրինակներ

1. Տվե՛ք հյուրանոցային օբյեկտի, տնտեսության, ծառայության և ինդուստրիայի բնորոշումները:
2. Ներկայացրե՛ք համաշխարհային հյուրանոցային տնտեսության տարածաշրջանային կառուցվածքը:
3. Որո՞նք են հյուրանոցային օբյեկտների տեղաբաշխման աշխարհագրական գործոնները:
4. Թվե՛ք առավել խոշոր և հայտնի միջազգային հյուրանոցային ցանցերը:
5. Որո՞նք են ուղևորատրանսպորտային ծառայությունների աշխարհագրական ուսումնասիրությունների ուղղություններն ու ցուցանիշները:
6. Տվե՛ք տրանսպորտային ուղիների և հանգույցների բնորոշումները:
7. Թվե՛ք աշխարհի խոշորագույն միջազգային օդանավակայաններն ու նավահանգիստները:
8. Տվե՛ք օդանավակայանի՝ որպես սպասարկման համալիր կենտրոնի բնութագիրը:

Աղյուսակ 1

«Սերվիսի աշխարհագրություն» դասընթացի աշխատանքային պլան

Թեման	***Դաս., ժ.***	***Գործ., ժ.***
1. Սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունները 1.1. Սերվիսային գործունեության հիմնական հասկացություններն ու գիտական ուսումնասիրությունները 1.2. Սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունները	4	2
2. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը, գործոնները, մակարդակները 2.1. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը, գործոնները 2.2. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման մակարդակները	4	2
3. Սերվիսի աշխարհագրությունը՝ որպես գիտություն 3.1. Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտը, առարկան 3.2. Սերվիսի աշխարհագրության միջգիտական կապերն ու առնչությունները	4	2
4. Սերվիսի աշխարհագրության հետազոտության մեթոդները 4.1. Նկարագրական, պատմական և համեմատական-աշխարհագրական 4.2. Քանակական-վիճակագրական և մաթեմատիկական 4.3. Քարտեզագրական և աշխարհատեղեկատվական	4	2
5. Զբոսաշրջային և սանատոր-կուրորտային ծառայությունների աշխարհագրություն 5.1. Զբոսաշրջային ծառայությունների աշխարհագրություն 5.2. Սանատոր-կուրորտային ծառայությունների աշխարհագրություն	4	0
6. Հյուրանոցային և ուղևորատրանսպորտային ծառայությունների աշխարհագրություն 6.1. Հյուրանոցային ծառայությունների աշխարհագրություն 6.2. Ուղևորատրանսպորտային ծառայությունների աշխարհագրություն	4	0
Ընդամենը	***24***	***8***

2. ՍԵՐՎԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Անդրադառնանք սերվիսի աշխարհագրության հետազոտություններում համաաշխարհագրական որոշ մեթոդների կիրառության հնարավորություններին և ուղիներին:

1. Նկարագրական մեթոդ: Աշխարհագրական հետազոտությունների հնագույն մեթոդներից է: Տևական ժամանակ զարգանալով որպես նկարագրական գիտություն՝ աշխարհագրությունը հիմնականում զբաղվում էր տարածքների բնական պայմանների և հարստությունների, աշխարհագրական դիրքի, բնակչության և բնակավայրերի, տնտեսական գործունեության ճների նկարագրությամբ:

Հարկ է նշել, որ նկարագրական մեթոդն արդիական է նաև այսօր՝ անշուշտ, նորացված բովանդակությամբ և մոտեցումներով: Այն հատկապես արդյունավետ է զբոսաշրջային ու էքսկուրսիոն ծառայությունների, դրանց զարգացման նախադրյալների և հեռանկարների աշխարհագրական վերլուծության ժամանակ: Գիտատեսական նշանակությունից բացի՝ նկարագրական մեթոդն ունի նաև գործնական կարևորություն՝ զբոսաշրջային երթուղիների ծրագրման, հիմնավորման և կազմակերպման, գիդ-էքսկուրսավարների մասնագիտական վերապատրաստման տեսանկյուններից:

2. Քարտեզագրական մեթոդ: Աշխարհագրության առավել տարածված մեթոդներից է: Այն լայնորեն կիրառվում է նաև սպասարկման ոլորտի տարբեր կողմերի տարածքային տեղաբաշխումն ու կազմակերպումը ներկայացնելու, վերլուծելու նպատակով: Գիտատեսական և գործնական-կիրառական մեծ նշանակություն ունեն սպասարկման ոլորտի տարբեր հատվածներին առնչվող հետևյալ թեմատիկ քարտեզները և ատլասները:

3. Քանակական-վիճակագրական և մաթեմատիկական մեթոդներ: Քանակական-վիճակագրական մեթոդների հիմքում ընկած են ելակետային քանակական-թվային տվյալների հավաքումը, մշակումն ու վերլուծությունը, ինչը թույլ է տալիս պարզաբանել իրականության որևէ կողմը, բացահայտել զարգացման օրինաչափությունները:

Սերվիսի աշխարհագրության շրջանակներում այս մեթոդները կիրառվում են ըստ շրջանների, երկրների ու տարածաշրջանների՝ ծառայությունների ծավալների (դրամական արտահայտությամբ), դրանց աճի և նվազման, գների, սպասարկման ոլորտի զարգացման տարածքային տարբերությունների ու դրանց պատճառների գնահատման, վերլուծության նպատակով:

Սպասարկման ոլորտի տեղաբաշխման և գործունեության վերլուծության ժամանակ օգտագործվող քանակական ցուցանիշների 3 հիմնական խմբերն են՝ բացարձակ, հարաբերական և ինտեգրալ[1]:

Բացարձակ ցուցանիշների թվին են դասվում սպասարկման ձեռնարկությունների թիվը և մակերեսը, անձնակազմի թվաքանակը, ծառայությունների մատուցման ծավալը՝ դրամական արտահայտությամբ, ուղևորաշրջանառության ծավալը, սպասարկման հաստատություններ այցելությունների բացարձակ թիվը՝ որոշակի ժամանակահատվածում, ծառայության համար ծախսված ժամանակը, ներքին, ներգնա և արտագնա զբոսաշրջային հոսքերի ինտենսիվությունը և այլն:

Հարաբերական ցուցանիշներն արտահայտվում են.

ա) Բնակչության 1 շնչի, 1000, 10 000 կամ 100 000 բնակչի հաշվով: Օրինակ՝ սպասարկման հաստատություններ այցելությունների թիվը, սպասարկման հիմնարկների և անձնակազմի թվաքանակը և այլն:

---

[1] **Մանասյան Մ. Գ.,** Հասարակական-աշխարհագրական հետազոտությունների մեթոդները, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2008:

բ) Տարածքի 1 կմ^2-ի հաշվով: Օրինակ՝ սպասարկման հաստատությունների (գիտակրթական, առողջապահական, ֆինանսաբանկային հիմնարկներ, զբոսաշրջային կազմակերպություններ, հյուրանոցային, ռեստորանային, առևտրի և ժամանցային օբյեկտներ և այլն) թիվը, տրանսպորտային ուղիների խտությունը և այլն: Սպասարկման օբյեկտների թիվը, տրանսպորտային ուղիների երկարությունը (խտություն, կմ/կմ^2) և այլն:

Ինտեգրալ ցուցանիշներն արտահայտվում են բալերով կամ տոկոսներով:

Քանակական-վիճակագրական մեթոդների հետ սերտորեն կապված են մաթեմատիկական մեթոդները: Կիրառվում են որպես «գործիք»՝ ծառայությունների առանձին տեսակների, դրանց դինամիկայի վերաբերյալ քանակական տվյալների մշակման, արտապատկերման և ընդհանրացման, արդյունքում՝ զարգացման կանխատեսման նպատակով (ըստ տարածքային միավորների): Կազմվում են աղյուսակներ, դիագրամներ և գրաֆիկներ, որոնք առավել հավաստի և ակնառու են դարձնում սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների արդյունքները:

Վիճակագրական տվյալների հիման վրա կարելի է որոշել առանձին ծառայության զարգացման մակարդակը կամ տարբեր ծառայությունների գծով բնակչության պահանջմունքների բավարարման աստիճանը:

Քարտեզագրական, վիճակագրական ու մաթեմատիկական մեթոդներն արդյունավետ կերպով կարող են կիրառվել համատեղ: Սպասարկման ոլորտի քարտեզները կարող են պարունակել նաև տարբեր ծառայությունների զարգացման մակարդակը, աճի տեմպերը բնութագրող գրաֆիկներ, դիագրամներ, սխեմաներ:

4. Համեմատական-աշխարհագրական մեթոդ: Համեմատությունը հետազոտվող օբյեկտների նմանությունների և տարբերությունների բացահայտումն է: Տարբեր տարածքային միավորների կտրվածքով տարբեր են սպասարկման ոլորտի զարգացման

մակարդակը, ծառայությունների տեսականին և ծավալները, դրանց պատճառները, բնակչության պահանջմունքները: Այդ տարածքային տարբերությունների, դրանց պատճառների բացահայտման և ուսումնասիրության նպատակով է կիրառվում համեմատական-աշխարհագրական մեթոդը:

5. Պատմական մեթոդ: Թույլ է տալիս բացահայտել սպասարկման ոլորտի զարգացման պատմական, ժամանակային ընթացքը՝ ինչպես համամոլորակային, այնպես էլ առանձին երկրների, դրանց խմբերի, տարածաշրջանների մակարդակով: Սա թույլ է տալիս լիարժեք և հիմնավորված պատկերացում կազմել ծառայությունների ոլորտի զարգացման արդի վիճակի, ինչպես նաև հեռանկարային զարգացման միտումների վերաբերյալ:

Յուրաքանչյուր գիտության մեթոդական համակարգում առանձնահատուկ տեղ ունեն տեղեկատվության ստացման, հավաքման մեթոդները: Դրանցից են դիտանցիոն, լաբորատոր և դաշտային դիտարկումները, անկետային-սոցիոլոգիական հարցումները և այլն: Գիտության և տեխնիկայի բուռն զարգացմանը զուգընթաց՝ դրանք ևս նորացվում և կատարելագործվում են: Սերվիսի աշխարհագրության շրջանակներում առավել կիրառելի են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները.

1. Տպագիր աղբյուրների (մասնագիտական գրականություն, հոդվածներ, վիճակագրական տարեգրքեր, հաշվետվություններ և այլն) վերլուծություն,

2. Ինտերնետ-ռեսուրսների (գերատեսչությունների պաշտոնական կայքերում տեղադրված վիճակագրական տվյալներ, զեկույցներ, հաշվետվություններ, էլեկտրոնային հոդվածներ, գրքեր և այլն) վերլուծություն,

3. Քարտեզագրական նյութերի (սպասարկման ոլորտի տպագիր և էլեկտրոնային թեմատիկ քարտեզներ, ատլասներ) վերլուծություն,

4. Դաշտային հետազոտություններ և սոցիոլոգիական հարցումներ՝ տնտեսության մեջ և բնակչության կենսամակարդակի

բարձրացման գործում սպասարկման ոլորտի տեղի և դերի գնահատման, կոնկրետ տարածքի բնակչության պահանջմունքները հաշվի առնելով՝ սպասարկման մակարդակի գնահատման, սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման կատարելագործման ուղիների հիմնավորման և այլն նպատակներով:

Աղյուսակ 2-ում ներկայացված են դասավանդման որոշ մեթոդներ և դրանց դերը դասընթացի կրթական վերջնարդյունքների ապահովման տեսանկյունից:

Աղյուսակ 2

Դասավանդման մեթոդներն ու կրթական վերջնարդյունքները

№	*Դասավանդման մեթոդներ և մուտեցումներ*	*Կապը՝ կրթական վերջնարդյունքների հետ*
1.	Դասախոսություններ	Զարգացնում է սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման, սերվիսի աշխարհագրության՝ որպես գիտության վերաբերյալ ամբողջական և համակարգված գիտելիքները, պատկերացումները, գործնական կարողություններն ու հմտությունները:
2.	Խմբային քննարկումներ	Նպաստում է վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը, գիտական բանավեճերի մշակույթի ձևավորմանը, ուսանողների առավել ակտիվ ներգրավվածությանը, գաղափարների և տեսակետների փոխանակմանը:
3.	Մտագրոհ	Նպաստում է վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը, նոր գիտելիքների ստացմանը:
4.	Անհատական կամ փոքր-խմբային հետազոտություններ	Ուսանողների մոտ զարգացնում է ինքնուրույն հետազոտական աշխատանքներ կատարելու և տեղեկատվական աղբյուրների վերլուծության կուլտուրան, ուսանողները մասնագիտանում են սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների կոնկրետ ոլորտներում՝ անհատական հետազոտական հետաքրքրություններին և նախասիրություններին համապատասխան:

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է գործնական պարապմունքներ կազմակերպել հետևյալ թեմաներով.

1. Սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունները (2 ժամ),

2. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը, գործոնները, մակարդակները (2 ժամ),

3. Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրման օբյեկտը, առարկան, կառուցվածքը և կապն այլ գիտությունների հետ (2 ժամ),

4. Սերվիսի աշխարհագրության հետազոտության մեթոդները (2 ժամ):

Աղյուսակ 3-ում ներկայացված է գործնական պարապմունքների բովանդակային (փուլային) և ժամանակային պլանավորման նմուշ-օրինակ՝ 2 ժամի (80 ր) հաշվարկով:

Աղյուսակ 3

Գործնական պարապմունքների փուլային և ժամանակային պլանավորման նմուշ-օրինակ

Գործնական պարապմունքի փուլերը	***Տևողությունը, րոպե***	***Բովանդակություն, ցուցումներ***
Ուսանողների հաշվառում	5	-
Տեսական հատված	15	Մտագրոհ, քննարկումներ, հակիրճ-ակնարկային դասախոսություն
Նախապատրաստական հատված	10	Խնդիրների, առաջադրանքների ձևակերպում, կատարման ընթացքի ներկայացում և պարզաբանում, անհրաժեշտ նյութերի տրամադրում, բաժանում խմբերի
Գործնական աշխատանքի կատարում	30	Խմբային կամ անհատական աշխատանք

Արդյունքների ներկայացում և ամփոփում	20	Բանավոր ներկայացումներ, քննարկումներ, համեմատություններ

3.1. ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տվյալ գործնական պարապմունքի նպատակն է ամրապնդել ուսանողների տեսական գիտելիքները սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի գիտական, մասնավորապես աշխարհագրական ուսումնասիրությունների էության և առանձնահատկությունների վերաբերյալ:

Տեսական հատված

Սերվիսային գործունեությունն իր բովանդակությամբ բարդ է և ընդգրկուն: Այդ իսկ պատճառով նրա ուսումնասիրությունները միջգիտական-միջճյուղային բնույթ են ստանում: Այսինքն՝ մի շարք գիտություններ միաժամանակ զբաղվում են սպասարկման տարբեր կողմերի, ասպեկտների ուսումնասիրությամբ: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի գիտական ուսումնասիրությունների հետևյալ ուղղությունները՝ տնտեսագիտական, մարքեթինգային, մշակութաբանական, սոցիալ-հոգեբանական, մենեջերական, պատմական, քաղաքագիտական, իրավագիտական և աշխարհագրական:

Մասնավորապես աշխարհագրական մոտեցման հիմնական նպատակն է մարդկանց պահանջմունքների և ծառայությունների մատուցման տարածքային տարբերությունների բացահայտումը,

սպասարկման ոլորտի զարգացման և կազմակերպման տարածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Աղյուսակ 4

Սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների ցուցանիշները

Ցուցանիշները	***Տեսակները***
Բացարձակ	*Սպասարկման ձեռնարկությունների թիվը, մակերեսը, անձնակազմի թվաքանակը, ծառայությունների մատուցման ծավալը դրամական արտահայտությամբ, սպասարկման հաստատություններ այցելությունների բացարձակ թիվը որոշակի ժամանակահատվածում, զբոսաշրջային հոսքերի ինտենսիվությունը և այլն*
Հարաբերական՝ բնակչության 1 շնչի, 1000, 10 000 կամ 100 000 բնակչի հաշվով	*Սպասարկման տարաբնույթ հաստատություններ այցելությունների թիվը, սպասարկման հիմնարկների, անձնակազմի-մասնագետների թվաքանակը և այլն*
Հարաբերական՝ միավոր մակերեսի հաշվով	*Սպասարկման հաստատությունների (գիտակրթական, առողջապահական, ֆինանսաբանկային հիմնարկներ, զբոսաշրջային կազմակերպություններ, հյուրանոցային, ռեստորանային, առևտրի և ժամանցային օբյեկտներ և այլն) թիվը, տրանսպորտային ուղիների երկարությունը և այլն*

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

Առաջադրանքները կատարվում են խմբային տարբերակով, յուրաքանչյուր խմբում՝ 5-6 ուսանող:

1)Սպասարկման ոլորտի գիտական ուսումնասիրությունների համալիր-միջճյուղային բնույթը: Լրացնել աղյուսակը

Գիտական ուսումնասիրությունների ուղղությունները	*Հիմնական հարցերը*

2) Սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների բնորոշ-տարբերիչ առանձնահատկությունները: Կատարման ձևը՝ ազատ շարադրանք:

3) Սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների ցուցանիշները: Լրացնել աղյուսակը:

Ցուցանիշները	***Օրինակներ***
Բացարձակ	
Հարաբերական՝1 շնչի, 1000, 10 000 կամ 100 000 բնակչի հաշվով	
Հարաբերական՝ միավոր մակերեսի հաշվով	

3.2. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տվյալ գործնական պարապմունքի նպատակն է խմբային աշխատանքի միջոցով խորացնել և ամրապնդել ուսանողների գիտելիքները տարածքային տեղաբաշխման և կազմակերպման, հասարակության տարածքային կազմակերպման, սպասարկման ոլորտի և ծառայությունների տարբեր տեսակների տարածքային կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ:

Տեսական հատված

Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հստակ տարբերել *«տարածքային տեղաբաշխում» և «տարածքային կազմակերպում»* հասկացությունները:

Ընդհանրապես ***տարածքային տեղաբաշխում*** ասելով՝ պետք է հասկանալ աշխարհագրական օբյեկտների և երևույթների բաշխվածությունը տարածության մեջ, նրանց աշխարհագրական հասցեն՝ գտնվելու վայրը: Այս դեպքում առավել կարևորվում է *«որտե՞ղ»* հարցը:

Տարածքային կազմակերպումն ավելի լայն հասկացություն է: Այն ընդգրկում է աշխարհագրական օբյեկտների, երևույթների և գործընթացների, բնակավայրերի, տնտեսության ճյուղերի և ձեռնարկությունների ոչ միայն տեղաբաշխումը տարածության մեջ, այլ նաև դրանց միջև փոխադարձ կապերի, հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը: Այս դեպքում, «որտե՞ղ» հարցից բացի, կարևորվում են նաև *«ինչո՞ւ» և «ինչպե՞ս»* հարցերը:

Տարածքային կազմակերպումը կարելի է արտահայտել բանաձևի տեսքով՝

$S_{կազմ} = S_{բնակաբ.}$ + *փոխադարձ կապեր և հարաբերություններ:*

Ըստ Լ. Վալեսյանի՝ հասարակության տարածքային կազմակերպումը կարող է դիտարկվել 2 իմաստով՝ որպես գործընթաց և որպես գործընթացի արդյունք[2]:

Որպես գործընթաց՝ հասարակության տարածքային կազմակերպումն իրենից ներկայացնում է մարդկանց կյանքի, գործունեության բոլոր տեսակների տարածական տեղաբաշխման և դրանց միջև փոխադարձ տարածական կապերի հաստատման գործընթացը: Այն վերաբերում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային:

Որպես գործընթացի արդյունք՝ հասարակության տարածքային կազմակերպումը հասարակության տարածական կազմակերպվածության, կարգավորվածության որոշակի աստիճան, մակարդակ է:

Ընդհանուր առմամբ, սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումն ընդգրկում է.

ա. բնակչության սպասարկման ծառայությունների, սպասարկման կազմակերպությունների տարածական տեղաբաշխումը,

բ. դրանց միջև փոխադարձ տարածքային կապերի, հարաբերությունների ձևավորումը:

Արդյունքում ձևավորվում է սպասարկման ոլորտի տարածքային կառուցվածքը: Այն իրենից ներկայացնում է որոշակի տարածքում ձևավորված սպասարկման օբյեկտների փոխկապակցված ամբողջությունը՝ սպասարկման տարածքային ցանցերի և համակարգերի տեսքով:

Ըստ Մ. Մանասյանի՝ սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման ուսումնասիրության ժամանակ պետք է հաշվի

---

[2] **Վալեսյան Լ. Հ.,** Հասարակական աշխարհագրության ներածություն, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1999:

առնել, որ սպասարկման հիմնարկները, ըստ օգտագործման բնույթի, լինում են.

1. ամենօրյա օգտագործման,
2. պարբերական օգտագործման (հաճախությունը՝ ամսական մի քանի անգամ),
3. դիպվածային օգտագործման (հաճախությունը՝ տարեկան մի քանի անգամ),
4. բացառիկ օգտագործման:

Նույն հեղինակի կողմից առանձնացվում և նկարագրվում են նաև սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման վրա ազդող հիմնական գործոնները՝

- տնտեսական,
- սոցիալական,
- ժողովրդագրական,
- տրանսպորտային,
- տարաբնակեցման,
- աշխատանքային ռեսուրսների,
- բնական և այլն[3]:

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

1) Ծառայություններն ըստ օգտագործման հաճախության: Լրացնել աղյուսակը:

Հաճախությունը	*Ծառայությունների տեսակները*	*Տեղաբաշխման առանձնահատկությունները*
Ամենօրյա		
Պարբերական		
Դիպվածային		
Բացառիկ		

[3] **Մանասյան Մ. Գ.**, Հասարակական-աշխարհագրական հետազոտությունների մեթոդները, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2008:

2) Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման էությունը: Կազմակերպման և տեղաբաշխման տարբերությունները: Ազատ շարադրանք:

3) Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման գործոններն ու դրանց խմբերը: Լրացնել աղյուսակը

Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման գործոնների խմբերը և դրանց բնութագրերը
1.
2.
3.
4.
5.

3.3. ՍԵՐՎԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տվյալ գործնական պարապմունքի նպատակն է ամրապնդել ուսանողների տեսական գիտելիքները սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտի և առարկայի, գիտությունների համակարգում ունեցած տեղի և միջգիտական կապերի վերաբերյալ:

Տեսական հատված

Ուսումնասիրության օբյեկտ ասելով՝ հասկանում ենք հարցերի այն շրջանակը կամ ոլորտը, որն ուսումնասիրվում է գիտության տվյալ ճյուղի կամ ճյուղերի կողմից: Մեկ օբյեկտը կարող է հետազոտվել մեկից ավելի գիտությունների կողմից, ընդհանուր լինել դրանց համար:

Ուսումնասիրության միևնույն օբյեկտն ունեցող տարբեր գիտությունները միմյանցից տարբերվում են ուսումնասիրության առարկաներով:

Ուսումնասիրության առարկան իրենից ներկայացնում է օբյեկտի առանձին, համեմատաբար նեղ, փոքր և կոնկրետ կողմը, հատվածը, որն ուսումնասիրվում է մեկ գիտության կողմից, հատուկ է միայն այդ գիտությանը:

Գիտությունների՝ ըստ ուսումնասիրության օբյեկտի դասակարգման արդյունքում առանձնացվում են բնական, հասարակական և տեխնիկական գիտություններ: Աշխարհագրությունը, գտնվելով այդ 3 խմբերի փոխադարձ շփման հատվածում, սերտորեն կապված է բոլորի հետ և հանդես է գալիս որպես սահմանային գիտություն[4]:

Աշխարհագրության 2 հիմնական բլոկներն են սոցիալ-տնտեսական (հասարակական) աշխարհագրությունն ու ֆիզիկական աշխարհագրությունը:

Ըստ Լ. Վալեսյանի՝ սոցիալ-տնտեսական կամ հասարակական աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտն է մարդկային հասարակությունը, իսկ առարկան՝ հասարակության տարածքային կազմակերպումը: Նույն հեղինակի կողմից աշխարհագրության այս ուղղության շրջանակներում առանձնացվում են ճյուղային հետևյալ բաղադրիչները՝ տնտեսական աշխարհագրություն, բնակչության աշխարհագրություն, սոցիալական աշխարհագրություն, մշակույթի աշխարհագրություն, քաղաքական աշխարհագրություն, բնական ռեսուրսների աշխարհագրություն[5]:

Սերվիսի աշխարհագրությունը գիտություն է, որը ձևավորվել է սոցիալ-տնտեսական աշխարհագրության և սերվիսաբանու-

---

[4] **Վալեսյան Լ. Հ.**, Հասարակական աշխարհագրության ներածություն, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1999:

[5] **Վալեսյան Լ. Հ.,** Հասարակական աշխարհագրության ներածություն, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1999:

թյան (սերվիսային գործունեության կազմակերպման ընդհանուր օրինաչափությունների համակողմանի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության) փոխշփման արդյունքում: Սոցիալ-տնտեսական աշխարհագրության վերոնշյալ 6 ճյուղային բաղադրիչներից այն առավելապես պատկանում է տնտեսական աշխարհագրությանը:

Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտն են սերվիսային գործունեությունը և սպասարկման ոլորտը, որն ուսումնասիրության ընդհանուր օբյեկտ է նաև սերվիսաբանություն գիտության համար: Ուսումնասիրության առարկան են սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը, դրա առանձնահատկություններն ու օրինաչափությունները, ինչպես նաև տարածքային կազմակերպման գործընթացի արդյունքում ձևավորված սպասարկման տարածքային համակարգերը:

Ըստ Ս. Կովալյովի և Մ. Աբրամովի՝ սերվիսի աշխարհագրության հիմնական խնդիրներն են.

1. Բնակչության պահանջմունքների և մատուցվող ծառայությունների աշխարհագրական տարբերությունների ուսումնասիրությունը,

2. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման, սպասարկման կենտրոնների ձևավորման ուսումնասիրությունը,

3. Սպասարկման ոլորտի զարգացման և տեղաբաշխման տարածքային օրինաչափությունների ուսումնասիրությունը[6]:

Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտը՝ սպասարկման ոլորտն ունի բարդ կառուցվածք: Այդ իսկ պատճառով սերտ են սերվիսի աշխարհագրության կապերն ինչպես ոչ աշխարհագրական, այնպես էլ աշխարհագրական գիտությունների հետ:

---

[6] **Абрамов М. А.**, География сервиса, М., «Мысль», 1985.

Ոչ աշխարհագրական գիտություններից պետք է նշել տնտեսագիտությունը, մարքեթինգը, մշակութաբանությունը, սոցիոլոգիան, հոգեբանությունը, պատմությունը, սերվիսաբանությունը, կուրորտոլոգիան, զբոսաշրջագիտությունը:

Աշխարհագրական գիտություններից կապերը հատկապես սերտ են սոցիալ-տնտեսական աշխարհագրության ճյուղային գիտությունների հետ: Արժե հիշատակել նաև զբոսաշրջության և ռեկրեացիոն աշխարհագրությունը, կոմերցիոն աշխարհագրությունը, հյուրընկալության ոլորտի աշխարհագրությունը, համալիրային երկրագրությունը, ինչպես նաև գեոէկոլոգիան, լանդշաֆտագիտությունը և այլն:

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

Առաջադրանքները կատարվում են խմբային տարբերակով, յուրաքանչյուր խմբում՝ 5-6 ուսանող:

1) Լրացնել աղյուսակը

	Ուսումնասիրության օբյեկտը	*Օբյեկտ՝ այլ գիտությունների համար*	*Ուսումնասիրության առարկան*
Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն			
Սերվիսի աշխարհագրություն			

2) Լրացնել աղյուսակը

Գիտությունները	*Ուսումնասիրության օբյեկտը*	*Ուսումնասիրության առարկաները*
Բնակչության աշխարհագրություն		
Ժողովրդագրություն		
Ազգագրություն		

Մարդաբանություն		

3) Լրացնել սոցիալ-տնտեսական աշխարհագրության ճյուղային բաղադրիչները: Յույց տալ սերվիսի աշխարհագրության տեղը՝ համապատասխան դաշտից կամ դաշտերից ճյուղավորումներ կատարելով:



4) Յույց տալ սերվիսի աշխարհագրության կապն այլ գիտություններով հետ (1-6՝ աշխարհագրական, 7-12՝ ոչ աշխարհագրական գիտություններ):



3.4. ՍԵՐՎԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Տվյալ գործնական պարապմունքի նպատակն է սերվիսի աշխարհագրության հետազոտության մեթոդների վերաբերյալ տեսական գիտելիքների ամրապնդումը, ինչպես նաև ուսանողների մոտ հետազոտական մեթոդների գործնական կիրառման հմտությունների ձևավորումը:

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

Առաջադրանքները կատարվում են խմբային տարբերակով, յուրաքանչյուր խմբում՝ 5-6 ուսանող:

1. Նկարագրական մեթոդ: Կազմել ՀՀ մարզերի զբոսաշրջային-նկարագրական բնութագրերը՝ զբոսաշրջային-երկրագրական ուսումնասիրությունների՝ Ե. Սապոժնիկովայի կողմից մշակված սխեմայի հիման վրա:

Աղյուսակ 5
Տարածքի զբոսաշրջային-երկրագրական նկարագրության սխեմայի առաջարկ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի օրինակով

Զբոսաշրջային նկարագրության պարրերը	***Օրինակներ***
1. Աշխարհագրական դիրք	Սահմանակից մարզերը և համապատասխան բնական «դարպասները»՝ Արարատ՝ Զովաշենի լցք, Գեղարքունիք՝ Սելիմի լցք, Սյունիք՝ Որոտանի լցք: Տարանցիկ դիրքը ՀՀ-ն ԼՂՀ-ին և Իրանին կապող մայրուղիների նկատմամբ
	Ռելիեֆի յուրօրինակ ձևեր (Նորավանքի ժայռերը, Արփայի հովիտը, Վայոցսար), կանաչ գոտիներ և պահպանվող տարածքներ (Հերհերի գիհուտները, Ջերմուկի անտառները)

2. Բնություն	Ջրագրություն (Արփա և Եղեգիս գետերի ու վտակների հովիտները, Վարսերի ջրվեժը, Կեչուտի, Հերհերի ջրամբարները, Ջերմուկի հանքային ջրերը), բարձրալեռնային ալպյան մարգագետինները և այլն
3. Բնակչություն, պատմություն և մշակույթ	Բնակչության թիվը, կազմը, ձևավորման պատմաաշխարհագրական ընթացքը, քաղաքային և գյուղական տարաբնակեցումը, ավանդական մշակույթ (գյուղական տներ, տարազ, ծիսակատարություններ), պատմաճարտարապետական ժառանգությունը (Նորավանք, Գնդեվանք, Արենի, Վերնաշեն, Գլաձոր-Թանադե, Մարտիրոս, Սելիմի իջևանատուն, Սմբատաբերդ, Պառոշաբերդ, կամուրջներ, բնակատեղիներ և այլն)
4. Տնտեսություն և ենթակառուցվածք	Գետահովիտներում՝ խաղողագործություն և պտղաբուծություն, գինեգործություն՝ ինդուստրիալ և տնայնագործական մակարդակներով (Արենի, Գետափ, Արփի), հանքային ջրերի արտադրություն, չրեղենի, լավաշի, ավանդական հրուշակեղենի պատրաստում, գորգագործություն, ավանդական այլ արհեստներ: Մարզի ճանապարհային ցանցը, հյուրանոցային օբյեկտները և առողջարանները, առևտրի և սննդի հիմնական օբյեկտները

2. Քանակական և մաթեմատիկական մեթոդներ

ա. Լրացնել աղյուսակը

Մարզերը	**Ծառայութ-երի տարեկան ծավալը, մլն. դրամ**	**%՝ ծառայություն-ների ՀՀ ընդհանուր ծավալից**	**Բնակչ. թիվը (2011)**	**Ծառայութ. ծավալը 1 շնչի հաշվով, դ/մարդ**
ՀՀ	865 591.9	-	3262.6	
Ք. ԵՐԵՎԱՆ	746 381.0		1121.9	*665 283*
ԱՐԱԳԱԾՈՏՆ	7 413.6		142.4	*520 617*
ԱՐԱՐԱՏ	11 981.4		280.4	*427 296*
ԱՐՄԱՎԻՐ	15 366.7		285.8	*537 673*
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	7 729.7		242.4	*318 882*
ԼՈՌԻ	14 932.5		282.1	*529 333*
ԿՈՏԱՅՔ	26 560.8		282.1	*941 538*
ՇԻՐԱԿ	16 222.5		282.0	*575 265*
ՍՅՈՒՆԻՔ	9 425.4		159.2	*592 047*
ՎԱՅՈՑ ՁՈՐ	3 553.2		56.0	*634 500*
ՏԱՎՈՒՇ	6 025.1		134.6	*447 630*

Աղբյուրը՝www.armstat.am

բ. Ռանգային-աստիճանային կոռելյացիայի կապի որոշումը՝ ՀՀ մարզերում մեկ շնչի հաշվով ծառայությունների ծավալի և որևէ այլ ցուցանիշի միջև[7]:

Օրինակ՝ աղքատության տարածվածությունը ՀՀ մարզերում (տվյալները՝ http: //www.armstat.am/ file/ article/poverty_2011a_2.pdf, էջ 41), միջին անվանական աշխատավարձի չափը ՀՀ մարզերում (տվյալները՝ http://www.armstat.am/ file/article/ marz_12_16.pdf):

3. Քարտեզագրական մեթոդ

ա. Խմբավորել ՀՀ մարզերը՝ ըստ բնակչության մեկ շնչի հաշվով ծառայությունների ծավալի (<500 հազ. դրամ, 500-600 հազ. դրամ, >600 հազ. դրամ): Երեք խմբերից յուրաքանչյուրի համար ընտրել գունային ֆոնը և համապատասխան կերպով ներկել մարզերի ուրվագծերը:

Մարզը	***Խումբը***	***Գունային ֆոնը***	***Մարզը***	***Խումբը***	***Գունային ֆոնը***
Արագածոտն			Կոտայք		
Արարատ			Շիրակ		
Արմավիր			Սյունիք		
Գեղարքունիք			Վայոց ձոր		
Լոռի			Տավուշ		
			ք. Երևան		

[7] Հաշվարկի վերաբերյալ ցուցումները տե՛ս՝ http://cito-web.yspu.org/link1/metod/met90/node21.html, ինչպես նաև՝ **Մանասյան Մ. Գ.**, Հասարակական-աշխարհագրական հետազոտությունների մեթոդները, Ե., 2008:



Նկար 1. ՀՀ ուրվագծային քարտեզ

բ. Ուրվագծային քարտեզի վրա նշել ՀՀ սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման տարբեր մակարդակների կենտրոնները՝ օգտվելով աղյուսակից:

Աղյուսակ 6

ՀՀ սպասարկման կենտրոններն ու մակարդակները

Մարզը	*Սպասարկման կենտրոնները*		
	Մար-զային	*Շրջանային*	*Տեղական*
Արագա-ծոտն	Աշտարակ	Թալին, Ապարան, Ծաղկահովիտ	Արագած ավան
Արարատ	Արտա-շատ	Մասիս, Վեդի	Արարատ
Արմավիր	Արմավիր	Վաղարշապատ, Բաղրամյան	Մեծամոր
Գեղարքու-նիք	Գավառ	Սևան, Վարդենիս, Մարտունի, Ճամբարակ	Սոթք. Գագարին
Լոռի	Վանաձոր	Սպիտակ, Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի	Թումանյան, Շամլուղ, Ախթալա
Կոտայք	Հրազդան	Եղվարդ, Աբովյան	Բյուրեղավան, Չարենցավան, Նոր Հաճն, Ծաղկաձոր
Շիրակ	Գյումրի	Ամասիա, Աշոցք, Մարալիկ, Արթիկ	Անիպեմզա, Պեմզաշեն
Սյունիք	Կապան	Գորիս, Սիսիան, Մեղրի	Դաստակերտ, Ագարակ, Քաջարան
Վայոց ձոր	Եղեգնա-ձոր	Վայք	Ջերմուկ
Տավուշ	Իջևան	Նոյեմբերյան, Բերդ	Դիլիջան, Այրում

4. Համեմատական-աշխարհագրական մեթոդ: Կարող է կիրառվել նկարագրական մեթոդի հետ համատեղ: Մասնավորապես համեմատության մեջ կարող են դրվել տարբեր մարզերի՝ արդեն իսկ կազմված զբոսաշրջային բնութագրերը՝ ըստ նկարագրության առանձին տարրերի (տարածք և աշխարհագրական դիրք,

բնություն, բնակչություն, պատմություն և մշակույթ, տնտեսություն և ենթակառուցվածքներ):

Համեմատության մեջ կարող են դրվել նաև տարբեր մարզերում ծառայությունների տարբեր տեսակների ծավալն ու զարգացման մակարդակը բնութագրող վիճակագրական տվյալները: Որպես օրինակ՝ ներկայացնենք Կոտայքի մարզում ծառայությունների առանձին խմբերի մասնաբաժինները ծառայությունների ընդհանուր ծավալում՝ բացարձակ թվերով և տոկոսներով:

Աղյուսակ 7

Ծառայությունների ոլորտի կառուցվածքը Կոտայքի մարզում

Ծառայություններ խմբերը	***%՝ ընդհանուրից***
1. Կացության և հանրային սննդի	7,33
2. Մշակույթի, զվարճությունների, հանգստի	17,01
3. Կրթության	2,3
4. Առողջապահական և սոցիալական սպասարկման	4,17
5. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1,88
6. Տեղեկատվական և կապի	20,06
7. Տրանսպորտային	15,12
8. Վարչարարական և օժանդակ	1,24
9. Ֆինանսական և ապահովագրական	26,81
10. Այլ	4,08
Ընդամենը՝	***100***

Աղբյուր՝ www.armstat.am

Տարբեր մարզերի համար հաշվարկելով նշված ցուցանիշները՝ կարելի է դրանք համեմատության մեջ դնել, հաշվարկել կոռելյացիոն կապի գործակիցները, կառուցել համեմատության աղյուսակներ, մատրիցաներ և այլն:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Պրակտիկայի նախապատրաստական օրն անցկացվում է ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում:

Աղյուսակ 8

Պրակտիկայի կառուցվածքը, փուլերը

№	Պրակտիկայի փուլը	Վայրը	Տևողությունը
1.	Նախապատրաստական	ԵՊՀ	1 օր
2.	Դաշտային, այդ թվում՝ *Երթուղի 1. Փոքր կենտրոն-1* *Երթուղի 2. Փոքր կենտրոն-2* *Երթուղի 3. Ծիծեռնակաբերդ* *Երթուղի 4. Երևան-Հանքավան-Երևան* *Երթուղի 5. Երևան-Արենի-Նորավանք-Երևան*	Երևան, մարզեր *Երևան* *Երևան* *Երևան* *Կոտայք* *Վայոց Ձոր*	5 օր (30 ժամ) *1 օր* *1 օր* *1 օր* *1 օր* *1 օր*
3.	Կամերալ (օրագրերի կազմման անհատական աշխատանքներ)	ԵՊՀ, ուսանողների բնակության վայրեր	Հուլիս-օգոստոս ամիսներ
4.	Դաշտային օրագրերի ներկայացում, ստուգարք	ԵՊՀ	Սեպտեմբերի առաջին շաբաթ

Ղեկավարներն ուսանողներին ծանոթացնում են դաշտային երթուղիներին, դրանց բովանդակությանը, ուղղությանն ու տևողությանը, նպատակներին:

Ուսանողներն անհրաժեշտ ցուցումներ են ստանում պրակտիկայի օրագրերի կազմման և ձևավորման, դրանց ներկայացման և ստուգարքի անցկացման ժամանակացույցի վերաբերյալ: Հատուկ ուշադրություն է դարձվում դաշտային երթուղիների ընթացքում կարգապահական և անվտանգության հարցերին:

Ղեկավարների կողմից հանձնարարվում է պրակտիկայի օրագրերի պատրաստման համար անհրաժեշտ տպագիր և էլեկտրոնային սկզբնաղբյուրների ցանկը:

Երևան քաղաքում «Սերվիսի աշխարհագրություն» առարկայի ուսումնական պրակտիկայի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել մայրաքաղաքի սահմաններում սպասարկման օբյեկտների, հաստատությունների տարածքային տեղաբաշխման օրինաչափություններին, բնակավայրի սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների առանձնահատկություններին: Առանձնակի ուշադրություն է դարձվելու բնակավայրերում սպասարկման ոլորտի տարածքային միջուկների-կենտրոնների հիմնախնդրին («Կենտրոնական բիզնես-շրջան»):

Երևանից դուրս ուսումնական պրակտիկայի երթուղիների ընթացքում նախատեսվում է ուսանողներին գիտելիքներ հաղորդել կոնկրետ վարչական մարզերում սպասարկման ոլորտի և ծառայությունների կոնկրետ տեսակների զարգացման առանձնահատկությունների, սպասարկման տարածքային կենտրոնների և մակարդակների վերաբերյալ:

4.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ՝ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Երևանի սպասարկման ոլորտի աշխարհագրական ընդհանուր բնութագիրը (երթուղի 1, կանգառներ՝ Կասկադ համալիր, Ազատության հրապարակ, Հյուսիսային պողոտա)

Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում: **Տարածքը՝ 223 քառ. կմ,** բնակչության թիվը 2013 թ. դրությամբ՝ **1066.3 հազ. մարդ:** Երևանում է բնակվում ՀՀ բնակչու-

թյան ընդհանուր թվի մոտ **35.2%-ը:** Բնակչության միջին խտությունը շուրջ **4700 մարդ/քառ. կմ** է[8]:

Սահմանակից է Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Բաժանվում է 12 վարչական շրջանի՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: Տարածքի մեծությամբ ամենափոքր վարչական շրջանն է **Նորք-Մարաշը՝ 4.7 քառ. կմ**, ամենամեծը **Էրեբունին է՝ 47.5 քառ. կմ:** Բնակչության թվով ամենափոքրը **Նուբարաշենն է՝ 9.7 հազ. մարդ**, ամենամեծն են **Նոր Նորքը և Շենգավիթը՝ համապատասխանաբար 127.4 հազ. և 137.2 հազ. մարդ: Կենտրոն** վարչական շրջանում է բնակվում շուրջ **126 հազ. մարդ[9]:**

Ակնհայտ է, որ ներկայումս **ՀՀ սպասարկման ոլորտն աչքի է ընկնում անհամաչափ տարածքային կազմակերպմամբ.** ծառայությունների բոլոր տեսակների մատուցման գծով (զբոսաշրջային, հյուրանոցային և ռեստորանային, մշակութային, գիտակրթական, ֆինանսաբանկային և այլն) Երևանը բացարձակ և անվիճելի առաջատար է ողջ հանրապետությունում, որոշ ծառայությունների մատուցման գծով՝ միակ կենտրոնը:

Երևանին է բաժին ընկնում ՀՀ-ում ծառայությունների ընդհանուր ծավալի **86.7%-ը, որը կազմում է շուրջ 846 մլրդ դրամ[10]:** Երևան քաղաքի յուրաքանչյուր 1 բնակչի հաշվով դա կազմում է տարեկան շուրջ **790 000** դրամ (2012):

Երևանի **աշխատանքային ռեսուրսների թիվը** (բնակչության այն հատվածը, որն իր ֆիզիկական և մտավոր կարողություններով ունակ է աշխատել տնտեսության այս կամ այն ոլորտում) կազմում է մոտ **780 հազ. մարդ՝ Երևանի բնակչության ընդհանուր**

---

[8] www.armstat.am
[9] www.armstat.am
[10] www.armstat.am

թվի մոտ 73%-ը: Իր հերթին **տնտեսապես ակտիվ բնակչության թիվը** (աշխատանքային ռեսուրսների այն մասը, որը տվյալ պահին փաստացի ունի աշխատանք) **471.5 հազ.** մարդ է՝ քաղաքի աշխատանքային ռեսուրսների **60%-ը: Ծառայությունների ոլորտում է աշխատում Երևանի տնտեսապես ակտիվ բնակչության 75%-ը՝ մոտ 237 հազ. մարդ**[11]:

Ստորև ներկայացվում են Երևանի ծառայությունների ոլորտը բնութագրող մի շարք վիճակագրական ցուցանիշներ՝ ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների.

- **Մանրածախ առևտրի օբյեկտների թիվը՝** մոտ 11 500 (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 58%-ը), 2011 թ.,
- **Հյուրանոցների և ռեստորանների ծառայությունների** ծավալը՝ 43 մլրդ դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 90%-ը), 2011 թ.,
- **Տրանսպորտային ծառայությունների** ծավալը՝ 158 մլրդ դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 88%-ը), 2011 թ.,
- **Կապի ծառայությունների** ծավալը՝ մոտ 177 մլրդ դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 89%-ը), 2011 թ.,
- **Կոմունալ ծառայությունների** ծավալը՝ 4.8 մլրդ դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 75.2%-ը),
- **Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ծառայությունները՝** 18.3 մլրդ դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 98.5%-ը),
- **Առողջապահական և սոցիալական ծառայությունների** ծավալը՝ 24 մլրդ դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 80%-ը), 2011 թ.,
- **Մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների** ծավալը՝ 24.2 մլրդ. դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 75%-ը), 2011 թ.,

[11] www.armstat.am

- **Կրթական ծառայությունների** ծավալը՝ 35 մլրդ դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 86%-ը), 2011 թ.[12]:

Այլ ծառայությունների գծով ևս Երևանն անվիճելի առաջատար է ՀՀ-ում (մեքենաների և սարքավորումների վարձակալման, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի վարձույթի և վերանորոգման, ֆինանսաբանկային և այլ ծառայություններ):

Ազատության հրապարակը գտնվում է Երևանի կենտրոնական հատվածում՝ **Փոքր կենտրոնում, Ֆրանսիայի հրապարակի** հարևանությամբ, **Թումանյան, Տերյան փողոցների, Սայաթ-Նովա, Մաշտոց, Հյուսիսային պողոտաների** միջև: Այս հատվածով են անցնում Երևանի տարբեր վարչական շրջանները միմյանց միացնող հիմնական տրանսպորտային ուղիները: Հրապարակի հարևանությամբ են գտնվում **Մ. Սարյանի և Կոմիտասի հուշարձանները**՝ հարակից պուրակներով, **Կասկադ համալիրն ու Գաֆեսճէան թանգարանը, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան,** հասարակական սննդի և առևտրի բազմաթիվ օբյեկտներ, բանկերի մասնաճյուղեր, զբոսաշրջային գործակալություններ:

Ազատության հրապարակ-Կասկադ հատվածից է սկիզբ առնում **Օղակաձև զբոսայգին,** որը այնուհետև, Մոսկովյան և Խանջյան փողոցներին զուգահեռ, շարունակվում է դեպի մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարան, Երևանի պետական համալսարան և «Այրարատ» կինոթատրոն:

Ազատության հրապարակի գլխավոր կառույցը **Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի** շենքն է, նրան կից՝ **Ա. Խաչատրյանի անվան մեծ համերգասրահի** շենքը:

---

[12] www.armstat.am

Երևանի տարածքի գործառնական գոտիավորումը՝ սպասարկման ոլորտի զարգացման և տեղաբաշխման առումով (երթուղի 2, կանգառներ՝ Հյուսիսային պողոտա, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան, Իտալիայի փողոցներ, Շահումյան հրապարակ)

Երևանի սահմաններում սերվիսային սպասարկման օբյեկտներն անհամաչափ են կենտրոնացված: Այս առումով հստակորեն առանձնանում է **Կենտրոն վարչական շրջանը՝** որպես առավել զարգացած սերվիսային ենթակառուցվածք ունեցող գոտի: Կենտրոնի սահմաններում էլ կարելի է առանձնացնել **Փոքր կենտրոնը՝** Գր. Լուսավորիչ, Սարյան, Կորյուն, Չարենց, Ալեք Մանուկյան, Ագաթանգեղոս փողոցներով, Տիգրան Մեծ, Մաշտոց պողոտաներով պարփակված տարածքը: Փոքր կենտրոնի սահմաններում սերվիսային օբյեկտների տեղաբաշխումն անհամեմատ հավասարաչափ է, այդուհանդերձ կարելի է առանձնացնել **սպասարկման հիմնական «միջուկը» կամ «կորիզը»:** Այն ձգվում է **Գ. Լուսավորիչ փողոց-Հանրապետության հրապարակ-Հյուսիսային պողոտա-Ազատության հրապարակ-Կասկադ** առանցքով՝ ներառելով նաև հարակից տարածքներն ու դրանցում գտնվող սպասարկման օբյեկտները:

Ամերիկյան սոցիոլոգ և աշխարհագետ Էռնեստ Բուրգեսի կողմից մշակվել և 1925-ից շրջանառության մեջ դրվել *կոնցենտրիկ կամ համակենտրոն գոտիների մոդելը:* Այս մոդելի համաձայն՝ քաղաքի կազմում առանձնացվում են շրջանաձև տեսք ունեցող հետևյալ գոտիները.

- *Կենտրոնական գործարար-բիզնես շրջան:* ԱՄՆ-ում և անգլախոս այլ երկրներում կոչվում է նաև «դաուն-թաուն»: Այն քաղաքի գործարար, առևտրային և սպասարկման կարևորագույն կենտրոնն է, սովորաբար տեղակայված է քաղաքի կենտրոնական հատվածում: Հայտնի են Տորոն-

տոյի, Մեխիկոյի, Բուենոս-Այրեսի, Ֆրանկֆուրտի, Չիկագոյի, Շանհայի կենտրոնական բիզնես-շրջանները: Նյու-Յորքում այդպիսի շրջաններից են Մանհեթընն կղզին և Ուոլլ-Սթրիթը, Փարիզում՝ Սենա գետի Սիտե և Սեն-Լուի կղզիները, Լոնդոնում՝ Սիթին, Մոսկվայում՝ Մոսկվա-Սիթին: Երևանում այդպիսի շրջան է Փոքր կենտրոնը:

- *Գործարանային-արդյունաբերական գոտի:* Այն արտաքին կողմից շրջապատում է կենտրոնական գործարար շրջանը:
- *Անցումային գոտի:* Օգտագործվում է ինչպես բնակության, այնպես էլ գործարար նպատակներով:
- *Ցածր և միջին կարգի բնակելի շրջանների գոտի:* Կոչվում է նաև «ներքին քաղաք»:
- *Բարշրակարգ բնակելի գոտի* կամ «արտաքին քաղաք»:

Խոսելով Երևանի կենտրոնական բիզնես-շրջանի մասին՝ անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել նրա երկու կարևորագույն հանգույցներին՝ ***Հանրապետության և Ազատության հրապարակներին ու դրանց հարակից գոտիներին:***

Հանրապետության հրապարակից են սկիզբ առնում *Նալբանդյան, Աբովյան, Ամիրյան, Մելիք-Ադամյան, Վ.Սարգսյան և նրա շարունակությունը կազմող Իտալիայի փողոցները, Տիգրան Մեծ պողոտան:* Հրապարակի ճարտարապետական անսամբլը՝ շինությունների խումբը, ստեղծվել է Ալեքսանդր Թամանյանի նախագծով 1926 թվականին: Հրապարկի անսամբլի մեջ մտնում են.

- Հայաստանի պատմության թանգարանի և Ազգային պատկերասրահի շենքը,
- ՀՀ Կառավարության շենքը,
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության շենքը,
- «Mariott Armenia» հյուրանոցը,
- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, տարածքային կառավարման նախարարությունները:

Հրապարակի վրա կամ հարակից գոտում գտնվող հիմնական սպասարկման օբյեկտներն ու հաստատություններն են.

- «Ավիատրանս», «Կոնգրես», «Արարատ», «Էրեբունի», «Մարիոթ Արմենիա» հյուրանոցները,
- Մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանը,
- Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն՝ Վ. Սարգսյան փողոցում,
- Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը,
- Ֆրանսիայի, Իտալիայի և ՌԴ դեսպանատները,
- «Աէրոֆլոտ-ռուսաստանյան ավիաուղիներ» ավիաընկերության կենտրոնական գրասենյակը,
- «Արարատ» ռեստորանը,
- Բանկերի մասնաճյուղեր և գլխամասային գրասենյակներ՝ Վազգեն Սարգսյան և Ամիրյան փողոցներում:

Ծիծեռնակաբերդ (երթուղի 3, կանգառներ՝ Կ. Դեմիրճյանի անվ. մարզահամերգային համալիր, Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր, Ցեղասպանության թանգարան, Հաղթանակի կամուրջ)

Ծիծեռնակաբերդի բլուրը գտնվում է Հրազդան գետի աջ ափին՝ Լենինգրադյան, Կիևյան, Օրբելի եղբայրների փողոցների, Ծիծեռնակաբերդի խճուղու, Կիևյան կամրջի միջև ընկած տարածքում, Կենտրոն վարչական շրջանի տարածքում՝ Աջափնյակ, Արաբկիր և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների տարածքներին կից: Բլրի հարևանությամբ են գտնվում «**Հրազդան**» **մարզադաշտը, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը:** Դեպի հարավ՝ Ծիծեռնակաբերդի խճուղու, Հաղթանակի կամրջի և Ծովակալ Իսակովի պողոտայի հանգուցակետում են

գտնվում **Ս. Սարգիս եկեղեցին, Երևանի կոնյակի գործարանը, Կենտ. ավտոկայանը, «Մետրոպոլ» հյուրանոցը,** սպասարկման մի շարք հաստատություններ: Հաղթանակի կամրջի աջափնյա հատվածից է սկիզբ առնում **Ծովակալ Իսակովի պողոտան,** որը ձգվում է դեպի Երևանի արևմտյան դարպասը, ապա շարունակվում որպես արագընթաց ավտոմայրուղի՝ Երևանը միացնելով **«Զվարթնոց» միջազգային օդանավակայանին, Էջմիածին և Արմավիր քաղաքներին:** Իսակովի պողոտայի հարևանությամբ են գտնվում **Երևանյան լիճ-ջրամբարը, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը:**

Ծիծեռնակաբերդի բլրի ստորոտին՝ Հրազդան գետի կիրճի հարևանությամբ է գտնվում **Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը:** Մուտքը Լենինգրադյան փողոցի կողմից է՝ աստիճանների և շատրվանների կասկադով: Այստեղ են անցկացվում տարատեսակ մարզական և երաժշտական միջոցառումներ, համերգներ, ցուցահանդես-վաճառքներ:

Ծիծեռնակաբերդը Երևանի տարածքում գտնվող բրոնզեդարյան հնավայրերից է: Ավանդույթի համաձայն՝ այստեղ է գտնվել հայոց հեթանոսական դիցարանի սիրո աստվածուհի Աստղիկի տաճարը, որտեղ ծիծեռնակներ էին ապրում. այստեղից էլ առաջացել է «Ծիծեռնակաբերդ» անունը: Տարբեր ժամանակներում Ծիծեռնակաբերդում և հարակից Հրազդան գետի կիրճում հայտնաբերվել են բրոնզեդարյան դամբարաններ՝ նախշազարդ խեցեղենով, կժերով և կճուճներով, մարդկանց և կենդանիների ոսկորներով, ինչպես նաև կիկլոպյան ամրոցի, հնագույն շենքերի մնացորդներ, հիմքեր[13]:

1965-ին՝ Ցեղասպանության 50-րդ տարելիցին, Երևանում կազմակերպվեցին բազմահազարանոց ցույցեր: Դրանց արդյունքում **1966-ին** սկսվեց Ցեղասպանության հուշարձանի կառուցումը, որն ավարտվեց **1968 թ.**: **44 մետր բարձրությամբ** սյունը նշանա-

[13] Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 1979:

վորում է հայերի վերածնունդը: 12 քարե սալերը՝ դասավորված շրջանագծով, ներկայացնում են *Արևմտյան Հայաստանի* **12 հայաբնակ նահանգները:** Շրջանի կենտրոնում հավերժական կրակն է: Հուշարձանի հարևանությամբ գտնվում է **100 մետրանոց պատ,** որի վրա փորագրված են ջարդերի ենթարկված ամենահայտնի քաղաքների և գյուղերի անունները[14]:

Հայոց ցեղասպանության թանգարանը բացվել է 1995-ին, երբ նշվում էր Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցը (ճարտարապետներ՝ Ս. Քալաշյան, Ա. Թարխանյան, քանդակագործ՝ Ֆ. Առաքելյան):

Թանգարանի առաջին հարկը ստորգետնյա է, այստեղ գործում են վարչական, ինժեներատեխնիկական ծառայությունները, ինչպես նաև Կոմիտասի անվան դահլիճը: Այստեղ են տեղակայված նաև պահոցները, գրադարանը, ընթերցասրահը: Թանգարանային ցուցադրությունը տեղակայված է երկրորդ հարկում՝ ընդգրկելով մոտ 1000 քմ տարածք: Այն ունի հիմնական երեք փակ և մեկ բացօթյա ցուցասրահներ[15]:

4.2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ (թիվ 4 երթուղու օրինակով, Երևան-Հանքավան-Երևան)

Աղյուսակ 9

Երևան-Հանքավան-Երևան երթուղու կառուցվածքը

Երթուղու փուլը, կանգառները	***Կատարվելիք աշխատանքները***
Մեկնում, ԵՊՀ	Ուսանողների հաշվառում
1. Երևան-Հրազդան	Նկարագրել երթուղու ուղղությունը, տևողությունը, կանգառները
Կանգառ 1, ք. Հրազդան, Կոտայքի մարզ	Ներկայացնել Կոտայքի մարզի սպասարկման ոլորտի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը, Հրազդան քաղաքի՝ որպես սպասարկման կենտրոնի դերն ու գործառույթները

[14] http://hy.wikipedia.org/
[15] http://www.genocide-museum.am/

2. Հրազդան-Ծաղկաձոր	Ներկայացնել Ծաղկաձոր քաղաքի և հարակից գոտու զբոսաշրջային և ռեկրեացիոն գրավչության հիմնական կողմերը, հնարավորությունները
Կանգառ 2, Կեչառիսի վանական համալիր, ք. Ծաղկաձոր, Կոտայքի մարզ	Ներկայացնել Կեչառիսի վանական համալիրի ստեղծման պատմական ընթացքը, համալիրի առանձին եկեղեցիները, մոտակայքում գտնվող խաչքարերն ու մահարձանները
3. Ծաղկաձոր-Մարմարիկի ջրամբար	Ներկայացնել Մարմարի գետի հովտի զբոսաշրջային-ռեկրեացիոն ներուժն ու հնարավորությունները
Կանգառ 3, Մարմարիկի ջրամբար	Ներկայացնել Մարմարիկի ջրամբարի առափնյա գոտու ռեկրեացիոն հնարավորությունները
Կանգառ 4, գ. Հանքավան, Կոտայքի մարզ	Տալ Հանքավան գյուղի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը, զբոսաշրջային և սանատոր-առողջարանային գործունեության զարգացման հնարավորությունները, բնական-բուժական ռեսուրսները
Մեկնում, Հանքավան-ԵՊՀ	-

Երևան-Հրազդան երթուղու նկարագրությունը

Երևան-Հրազդան երթուղու երկարությունը շուրջ 45 կմ է: Շարժվելով ԵՊՀ-ից՝ ուղղություն ենք վերցնում դեպի հյուսիս-արևելք՝ անցնելով Երևանի Կենտրոն, Նոր Նորք և Ավան վարչական շրջանների տարածքներով:

Մայրաքաղաքի ծայր հյուսիսարևելյան «դարպասից» սկիզբ է առնում M1 միջպետական նշանակության ավտոմայրուղին, որը Երևանը Կոտայքի մարզի տարածքով միացնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերին (Երևան-Հրազդան-Սևան-Դիլիջան-Իջևան ուղղությամբ), ապա շարունակվում դեպի Ադրբեջան (Ղազախ քաղաք): Խորհրդային տարիներին M1 մայրուղին կարևոր նշանակություն ուներ Երևան-Թբիլիսի ավտոմոբիլային փոխադրումներում՝ Վրաստանի և Ադրբեջանի սահմանին գտնվող «Կարմիր կամուրջ» տեղամասով:

Աբովյան քաղաքից հյուսիս-արևելք՝ մայրուղու աջ կողմում, կարելի է տեսնել Հատիս, ձախ կողմում՝ Արայի հրաբխային լեռնագագաթները: Նույն հատվածում՝ մայրուղուց աջ, գտնվում են Ջրաբերի ավազի հանքավայրերը, որոնք շահագործվում են բաց

եղանակով: Մայրուղու աջ և ձախ կողմում գտնվող լեռնալանջերը հարուստ են օբսիդիան՝ «սատանայի եղունգ» կոչվող հրաբխային ծագման ապարով:

Մայրուղուց ձախ Չարենցավան քաղաքն է, որը բնակչության թվով Կոտայքի մարզում երրորդն է՝ Հրազդանից և Աբովյանից հետո: Խորհրդային տարիներին Հայաստանի խոշորագույն մեքենաշինական կենտրոններից էր (մասնավորապես հաստոցաշինական):

M1 մայրուղին հաճախ անվանում են նաև Կանաչ ճանապարհ, քանի որ Երևան-Սևան հատվածում բացակայում են քառաթև խաչմերուկները, ճանապարհը շրջանցում է բնակավայրերը՝ ընթանալով դրանց հարևանությամբ, իսկ աջակողմյան և ձախակողմյան ճյուղավորումները (դեպի Արզնի, Աբովյան, Նոր Հաճըն, Հրազդան, Ֆանտան, Սևան և այլն) կատարվում են մայրուղու վրա կառուցված կամուրջ-էստակադաներով, ինչը թույլ է տալիս զարգացնել տեղափոխության առավելագույն թույլատրելի արագություն:

Նման մի ճյուղավորումով էլ երթուղին ընթանում է դեպի Կոտայքի մարզկենտրոն Հրազդան **(Երևան-Հրազդան-Ծաղկաձոր-Մարմարիկի ջրմբ.-Հանքավան երթուղին և կանգառները նշել Կոտայքի մարզի ուրվագծային քարտեզի վրա՝ պրակտիկայի օրագրին կցելով):**

Կանգառ 1
Ք. Հրազդան: Կոտայքի մարզի սպասարկման ոլորտի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը

Կոտայքի մարզի տարածքը 2086 քկմ է, բնակչության թիվը՝ շուրջ 283 500 մարդ: Մարզի քաղաքները 7-ն են՝ Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Նոր Հաճըն, Բյուրեղավան, Եղվարդ, Ծաղկաձոր: Գյուղական համայնքները 60-ն են: 2011-ի տարեվերջի տվյալներով՝ մարզում մատուցված ծառայությունների ընդհանուր

ծավալը դրամական արտահայտությամբ կազմել է **26560,8 մլն դրամ կամ ՀՀ ընդհանուր ցուցանիշի ընդամենը 3 %-ը: Մարզի 1 բնակչի հաշվով դա կազմում է շուրջ 94 հազ. դրամ[16]:**

Ստորև բերված դիագրամում տրված է ծառայությունների առանձին տեսակների մասնաբաժինը՝ մարզում մատուցվող ծառայությունների ընդհանուր ծավալում: Առաջատար եռյակն են կազմում **ֆինանսական և ապահովագրական (27%), տեղեկատվական և կապի (20%), մշակույթի, զվարճությունների և հանգստի (17%) ծառայությունները:** Նույն թվականի տվյալներով՝ մարզում **մանրածախ առևտրի օբյեկտների թիվը** (ներառյալ խանութները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական ապրանքների շուկաները, կրպակները և այլն) **1587-ն է (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 8%-ը), որոնց գումարային շրջանառության ծավալը կազմել է 36360,9 մլն դրամ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 2,8%-ը):**



Նկար 2. Կոտայքի մարզի ծառայությունների ընդհանուր ծավալի բաշխվածությունն ըստ առանձին խմբերի (աղբյուր՝ www.armstat.am)

[16] www.armstat.am

Հաշվի առնելով, որ Կոտայքի մարզի տարածքը ձևավորվել է 3 նախկին վարչական շրջանների միավորումից (Նաիրիի, Աբովյանի և Հրազդանի), մարզի սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման համակարգում կարելի է առանձնացնել հետևյալ մակարդակները.

ա. Մարզային՝ ք. Հրազդան,

բ. Շրջանային՝ ք. Եղվարդ, ք. Աբովյան,

գ. Տեղական՝ ք. Չարենցավան, ք. Ծաղկաձոր, ք. Բյուրեղավան, ք. Նոր Հաճըն, գ. Գառնի, գ. Արզնի, գ. Արգել, գ. Մեղրաձոր և այլն **(նշել Կոտայքի մարզի ուրվագծային քարտեզի վրա՝ պրակտիկայի օրագրին կցելով):**

Մարզկենտրոն Հրազդանն ունի ավելի քան 53 հազ բնակիչ, այն ՀՀ արդյունաբերական խոշորագույն կենտրոններից է: Այստեղ է գտնվում ՀՀ ամենահզոր էլեկտրակայանը՝ Հրազդանի ՋԷԿ-ը՝ 1.1 մլն կՎտ հզորությամբ: Ներկայումս Հրազդանը Կոտայքի մարզի սպասարկման ոլորտի կարևորագույն կազմակերպիչ կենտրոնն է: Հրազդանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ քաղաքում գործում են 1 բուհ, 1 պատկերասրահ, 1 թատրոն, 2 թանգարան, 2 մշակույթի տուն, 14 հիմնական և ավագ դպրոց, բանկային 5 մասնաճյուղ, 1 բժշկական կենտրոն և 1 ստոմատոլոգիական պոլիկլինիկա[17]:

[17] www.hrazdan.am

Նկար 3. Կոտայքի մարզի ուրվագծային քարտեզ (www.wikipedia.org)

Կանգառ 2
Ք. Ծաղկաձոր: Կեչառիսի վանական համալիր

Ծաղկաձոր (Կեչառիս, Ծաղկոցաձոր, մինչև 1947 թ.՝ Դարաչիչակ) քաղաքը գտնվում է *Կոտայքի մարզում*, Թեղենիս լեռան արևելյան լանջին՝ ծովի մակերևույթից 1710 մ բարձրության վրա, մարզկենտրոն Հրազդանից 6 կմ հյուսիս-արևմուտք: Մեղմ և առողջարար կլիմայի շնորհիվ Ծաղկաձորը հանդիսանում է լեռնակլիմայական առողջավայր: Այստեղ են գտնվում հյուրանոցներ, մարզական բազաներ, 6 կմ երկարությամբ ճոպանուղին,

մանկական առողջարան, հանգստյան տներ և տուրիստական բազաներ[18]:

Միջնադարում Ծաղկաձորի հողերը պատկանել են Վարաժնունի, Կամսարական և Պահլավունի իշխանական տոհմերին: XVII դարի սկզբին քոչվոր ցեղերը, գրավելով տեղանքը, այն կոչեցին Դարաչիչակ: Քաղաքը կրկին Ծաղկաձոր վերանվանվեց 1947 թվականին: Ծաղկաձորում է գտնվում Լևոն Օրբելիի տուն-թանգարանը: Քաղաքի՝ որպես մարզական-առողջարարական կենտրոնի բուռն զարգացումը սկիզբ առավ խորհրդային տարիներին: 1968-ին Մեքսիկայում կայանալիք Օլիմպիական խաղերին նախապատրաստվելու համար հենց Ծաղկաձորում կառուցվեց ԽՍՀՄ օլիմպիական մարզաբազան:[19]

2005-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է «Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը: Ներկայումս Ծաղկաձորը լեռնադահուկային սպորտի, մարզական-առողջարանային զբոսաշրջության միջազգային կենտրոն է:

Ծաղկաձոր քաղաքի հյուսիս-արևմուտքում է գտնվում Կեչառիսի վանական համալիրը՝ միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական ու մշակութային կենտրոններից մեկը: Կեչառիսում ապրել և գործել են ժամանակի խոշոր գիտնականներ ու քաղաքական գործիչներ Գրիգոր Մագիստրոսը, Վասակ Խաղբակյանը, Խաչատուր Կեչառեցին և ուրիշներ: Համալիրը կազմված է չորս եկեղեցիներից, գավիթից և երկու մատուռից: ***Ս. Գրիգոր Լուսավորիչ*** եկեղեցին 1033 թ-ին կառուցել է Գրիգոր Մագիստրոսը: Եկեղեցուն արևմուտքից կից է ուղղանկյուն հատակագծով չորս սյուներով ***գավիթը*** (XII դ. վերջ): Նրանից հարավ գտնվում է գմբեթավոր ***Ս. Նշան*** ոչ մեծ եկեղեցին (1051): ***Կաթողիկե եկեղեցին***

[18] http://hy.wikipedia.org/
[19] http://hy.wikipedia.org/

կառուցել է իշխան Վասակ Խաղբակյանը 1203-1214 թթ-ին: Այն համալիրի հարավում է՝ Ս. Նշանի կողքին: Կաթողիկեն իր հարդարանքով Կեչառիսի եկեղեցիներից ամենաշքեղն է: Ավելի արևմուտք գտնվում է ***Ս. Հարություն*** եկեղեցին, որը կառուցվել է 1220 թ-ին: Կեչառիսում կան XII-XIII դդ. բազմաթիվ խաչքարեր: Նշանավոր է Վեցիկ ճարտարապետի մահարձան-խաչքարը (XIII դ.), որը կանգնեցրել են նրա ճարտարապետ եղբայրները: Կեչառիսի վանքում են թաղված նաև սելջուկների դեմ մղված ճակատամարտում զոհված Ապիրատյան Գրիգոր իշխանը (1099 թ.), Մեծ իշխան Պռոշը (1284 թ.)[20]:

Կանգառ 3
Մարմարիկի հովիտ և Մարմարիկի ջրամբար

Մարմարիկը Հրազդան գետի աջակողմյան ամենախոշոր վտակն է: Երկարությունը 42 կմ է, ջրհավաք ավազանը՝ 427 կմ², հոսում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ[21]: Գետի հովիտը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի հարավահայաց (ձախ կողմից) և Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսահայաց անտառապատ (աջ կողմից) լանջերի միջև: Ջրառատ գյուղի մոտ Մարմարիկը միանում է Հրազդան գետին: Ունի խառը սնում, հորդանում է գարնանը: Ջրերն օգտագործվում են ոռոգման և արդյունաբերական նպատակներով: Վերին հոսանքի ավազանում են գտնվում Հանքավանի հանքային աղբյուրներն ու բալնեոկլիմայական առողջավայրը:

Մարմարիկի հովիտն ունի զբոսաշրջային-ռեկրեացիոն մեծ ներուժ: Մեղմ կլիմայական պայմանների, մաքուր օդի, հանքային

[20] Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 1979:
[21] Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 7, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 1981:

ջրերի և անտառածածկ լեռնալանջերի առկայությունը թույլ է տվել այստեղ կառուցել ուսումնական հանգրվաններ, ամառային ճամբարներ, հանգստյան տներ և առողջարաններ:

Մարմարիկի ջրամբարը գտնվում է համանուն գետի վրա: Այն ունի 55 մ բարձրությամբ պատվար, ընդհանուր ծավալը 24 մլն մ^3 է, իսկ օգտակար ծավալը՝ 23 մլն մ^3: Ջրամբարը վերջնականորեն վերականգնվել և շահագործման է հանձնվել 2012-ի ապրիլին[22]:

Ողջ աշխարհում ջրամբարները կատարում են մի շարք գործառույթներ՝ գետի հոսքի կարգավորման, ոռոգիչ (տեղումնառատ սեզոններին ավելցուկային ջուրը կուտակվում է ջրամբարներում՝ չորային սեզոններին օգտագործելու նպատակով), կլիման կարգավորող (առափնյա գոտիներում ձևավորվում է մեղմ և խոնավ միկրոկլիմա), մարզական, զբոսաշրջային և ռեկրեացիոն:

Կանգառ 4
գ. Հանքավան

Հանքավան գյուղը ՀՀ բալնեոկլիմայական առողջավայրերից է: Գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Երևանից 75 կմ, իսկ մարզկենտրոն Հրազդանից՝ 30 կմ հեռավորության վրա՝ Մարմարիկ գետի վերին հոսանքի ավազանում: Բնակչության թվով այն Կոտայքի մարզի ամենափոքր գյուղն է՝ 93 մարդ[23]: Ազգային կազմը՝ հայեր և հույներ:

Շրջապատված է անտառածածկ և թփուտածածկ լեռնալանջերով: Կլիման մեղմ է, ամառը՝ չափավոր տաք (հուլիս-օգոստոսի միջին ջերմաստիճանը՝ 16-18°C), ձմեռը՝ չափավոր ցուրտ (հունվարի միջին ջերմաստիճանը՝ -7°C), արևափայլքի տևողությունը՝ տարեկան 2200 ժ, տեղումները՝ 660 մմ: Բնական բուժիչ հիմնական միջոցներն են լեռնային կլիման և «Հանքավան» հանքային

[22] www.library.aua.am/files/2012/05/**Marmarik**_Media-Brief_ARM_final.doc
[23] www.armstat.am

ջուրը: Այստեղ բուժվում են աղեստամոքսային հիվանդություններն ու նյութափոխանակության խանգարումները: Հանքավանի հանքային ջրերը դասվում են ածխաթթվային հիդրոկարբոնատ-քլորիդ-նատրիում-կալցիում-մագնեզիումական հանքային ջրերի շարքին: Աղբյուրները գտնվում են Հանքավան գյուղի շրջակայքում: Իր քիմիական կազմով և հատկություններով նման է Հյուսիսային Կովկասի «Եսենտուկի» հանքային ջրին: Ջրում ոչ մեծ քանակությամբ առկա են Cl, Na, Ca, Mg իոններ, զգալի է Fe-ի (15-25 մգ/լ) պարունակությունը: Ընդհանուր հանքայնացումը 8,2-8,7 մգ/լ է, CO_2-ի պարունակությունը՝ 1,5-2 մգ/լ: Հանքային ջրի ջերմաստիճանները՝ 27°C- 42,6°C[24]:

Աղյուսակ 10

Պրակտիկայի օրագրի ձևավորման ցուցումներ

ա. Օրագրի տիտղոսաթերթը	*բ. Երթուղիները*
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, Սերվիսի ամբիոն **«Սերվիսի աշխարհագրություն» դասընթացի ուսումնական պրակտիկայի** **Օ Ր Ա Գ Ի Ր** Կուրսը՝ _____ Ուսանողի Ա.Ա.Հ. _____ _____ Ղեկավար (ներ)՝ _____ _____ Ուս. տարին _____ Կիսամյակը _____	*Ամսաթիվ* _____ *Երթուղի №* _____ *Ուղղությունը՝* _____ *Երթուղու նպատակն ու ընդհանուր նկարագիրը* _____ _____ Կանգառ 1 Կանգառ 2 … Լուսանկարներ, աղյուսակներ, քարտեզ-սխեմաներ

[24] Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 6, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 1980:

ԸՆԹԱՑԻԿ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՔՆՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ №1

Թեստ 1. *Սերվիսաբանությունը համալիր կերպով ուսումնասիրում է՝*

1. Սերվիսային գործունեության կազմակերպման ընդհանուր հարցերը
2. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը
3. Նյութական ծառայությունների ոլորտը
4. Սպասարկման ոլորտի տարածքային համակարգերը

Թեստ 2. *Սերվիսի գիտական հետազոտությունների մոտեցումներից չէ՝*

1. Աշխարհագրական
2. Մշակութային
3. Կենսաբանական
4. Սոցիալ-հոգեբանական

Թեստ 3. *Տարածքը, որին բաժին է ընկնում տվյալ սպասարկման հաստատության հաճախորդների 50%-ը, կոչվում է՝*

1. Սպասարկման շառավիղ
2. Առևտրային շրջան
3. Սպասարկվող շառավիղ
4. Սպասարկող գոտի

Թեստ 4. *Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման ժողովրդագրական գործոններից է՝*

1. Բնակչության սոցիալական և մասնագիտական կազմը
2. Բնակչության թիվն ու աճի տեմպերը
3. Բնակչության խտությունը
4. Տարածքի տրանսպորտային ապահովվածությունը

Թեստ 5. *Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտն է՝*

1. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը
2. Նյութական ծառայությունների ոլորտը
3. Տուրիզմի ոլորտը
4. Սերվիսային գործունեությունը

Թեստ 6. *Հասարակական աշխարհագրության ճյուղերից սերվիսի աշխարհագրությունը պատկանում է՝*

1. Բնակչության աշխարհագրությանը
2. Սոցիալական աշխարհագրությանը
3. Տնտեսական աշխարհագրությանը
4. Քաղաքական աշխարհագրությանը

Թեստ 7. *Մեթոդների ամբողջությունը կոչվում է՝*

1. Մեթոդիկա
2. Մեթոդոլոգիա
3. Մեթոդաբանություն
4. Բոլոր տարբերակները սխալ են

Թեստ 8. *Սերվիսի աշխարհագրական ուսումնասիրությունների հնագույն մեթոդն է՝*

1. Աշխարհատեղեկատվականը
2. Նկարագրականը
3. Մաթեմատիկականը
4. Քարտեզագրականը

ՔՆՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ №2

Թեստ 1. *Աշխարհագրության սոցիոլոգայնացմանը բնորոշ է՝*

1. Բնակչության կարիքների և դրանց բավարարման ուսումնասիրությունը
2. Սոցիալական հիմնահարցերի ուսումնասիրությունը
3. Կրթական մակարդակի ուսումնասիրությունները

4. Աղքատության մակարդակի ուսումնասիրությունը

Թեստ 2. *Բնութագրալ ցուցանիշներն արտահայտվում են՝*

1. 1 շնչի հաշվով
2. Բալերով կամ տոկոսներով
3. 1 կմ^2-ի հաշվով
4. 1000, 10 000 կամ 100 000 բնակչի հաշվով

Թեստ 3. *Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման մակարդակներից չէ՝*

1. Տեղական
2. Մարզային կամ տարածաշրջանային
3. Շրջանային
4. Պետական

Թեստ 4. *Բնակության վայրերին առավել մոտ են տեղաբաշխված՝*

1. Ամենօրյա օգտագործման օբյեկտները
2. Պարբերական օգտագործման ծառայությունները
3. Դիպվածային օգտագործման ծառայությունները
4. Բացառիկ օգտագործման ծառայությունները

Թեստ 5. *Սերվիսի աշխարհագրությունը գտնվում է՝*

1. Հասարակական աշխարհագրության և ֆիզիկական աշխարհագրության շփման գոտում
2. Ֆիզիկական աշխարհագրության և սերվիսաբանության շփման գոտում
3. Հասարակական աշխարհագրության և սերվիսաբանության շփման գոտում
4. Սերվիսաբանության և սոցիոլոգիայի շփման գոտում

Թեստ 6. *Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության առարկան է՝*

1. Հասարակական կյանքը
2. Հասարակության տարածքային կազմակերպումը
3. Սպասարկման ոլորտը

4. Սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը

Թեստ 7. *Մաթեմատիկական մեթոդն առավել սերտ կապված է՝*

1. Քանակական-վիճակագրական մեթոդի հետ
2. Համեմատական-աշխարհագրական մեթոդի հետ
3. Պատմական մեթոդի հետ
4. Նկարագրական մեթոդի հետ

Թեստ 8. *Նորագույն համակարգչային տեխնոլոգիաների հետ առավել սերտորեն կապված է սերվիսի աշխարհագրության՝*

1. Համեմատական-աշխարհագրական մեթոդը
2. Աշխարհատեղեկատվական մեթոդը
3. Նկարագրական մեթոդը
4. Պատմական մեթոդը

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

1. Ամենօրյա օգտագործման ծառայություններ: Մատուցվում են յուրաքանչյուր օր, ապահովում են բնակչության առօրյա նորմալ-բնականոն կենսագործունեությունը: Ամենօրյա օգտագործման սպասարկման հիմնարկների թվին են դասվում կենցաղային ապրանքների և սննդամթերքի վաճառքով զբաղվող խանութները, որոշակի սեզոններին՝ նաև նախադպրոցական հաստատությունները, դպրոցները և բուհերը: Ա.օ.ծ.-երի թվին կարող են դասվել նաև ուղևորատրանսպորտային ծառայությունները՝ կախված մարդկանց կյանքի ռիթմից, աշխատանքային գործունեության վայրից, բնույթից և այլն:

2. Առևտրային շրջան: Այն տարածքը, որին բաժին է ընկնում սպասարկման տվյալ հաստատության հաճախորդների առնվազն 50%-ը: Ա.շ.-ի մակերեսն ու սահմանները կախված են սպասարկման հաստատության գործունեության բնույթից, առանձնահատկություններից, մատուցվող ծառայությունների ծավալներից և տեսականուց: Համեմատաբար սահմանափակ և առօրյա բնույթի ծառայություններ մատուցող օբյեկտները կունենան համեմատաբար սահմանափակ (բակ, փողոց, թաղամաս), իսկ առավել բարձր կարգի և բազմազան ծառայություններ մատուցող հաստատությունները՝ ավելի ընդարձակ Ա.շ.:

3. Բալնեոթերապիա: Կուրորտներում բնական հանքային ջրերի օգնությամբ հիվանդությունների, ինչպես նաև օրգանիզմի ֆունկցիոնալ այլ խախտումների բուժման, կանխարգելման և վերականգնման մեթոդների ամբողջությունն է:

4. Բալնեոլոգիա: Գիտություն, որն ուսումնասիրում է բուժիչ հանքային ջրերը, դրանց ծագումը, ֆիզիկական և քիմիական հատկանիշները, ազդեցությունն օրգանիզմի վրա՝ տարբեր հիվանդությունների պարագայում, ինչպես նաև հանքային ջրերի օգտագործման կանոններն ու չափաբաժինները:

5. Բալնեոլոգիական կուրորտ: Կուրորտների տեսակ, որտեղ բուժման և հանգստի նպատակներով օգտագործվում են բնական հանքային ջրերը: Առավել հայտնի են Ախեն, Բադեն-Բադեն (Գերմանիայում), Կարլովի Վարի, Մարիանսկե-Լազնե, Ֆրանտիշկովի-Լազնե (Չեխիայում), Սպա (Բելգիայում), Սանկտ-Մորից, Կրանս-Մոնտանա (Շվեյցարիայում) Բ.կ.-երը: Հյուսիսային Կովկասում նշանավոր են Եսսենտուկի, Պյատիգորսկ, Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ, ՀՀ-ում՝ Ջերմուկ, Արզնի, Դիլիջան, Բորժոմի Բ.կ.-երը:

6. Զբոսաշրջային գոտի (գոնա): Տարածք է, որը բնութագրվում է զբոսաշրջային-ռեկրեացիոն մասնագիտացմամբ, զբոսաշրջային ներուժի բարձր կենտրոնացմամբ և օժտված է զբոսաշրջային գրավչությամբ կամ «ձգողականությամբ»: Իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝ նոր օբյեկտների տեղաբաշխման պլանավորման կարգավորում, նախկինում տեղաբաշխված օբյեկտների օգտագործում, ցուցադրության օբյեկտների օպտիմալ օգտագործում:

7. Զբոսաշրջային կենտրոն: Զբոսաշրջիկի հանգստի վայրը՝ օժտված ռեկրեացիոն հնարավորություններով (բնական, պատմամշակութային, էկոլոգիական, էթնիկական և այլն):

8. Զբոսաշրջային կլաստեր: Որոշակի սահմանափակ տարածքում կազմակերպությունների և ձեռնարկությունների փոխկապակցված ամբողջություն կամ կենտրոնացում, որը զբաղվում է զբոսաշրջային արտադրանքի մշակմամբ, ստեղծմամբ, վաճառքով, առաջխաղացմամբ, ինչպես նաև զբոսաշրջային և ռեկ-

ռեացիոն ծառայություններին առնչվող գործունեության այլ տեսակներով:

9. Զբոսաշրջային մակրոռեգիոն/խոշոր տարածաշրջան: Զբոսաշրջային շրջանացման արդյունքում առանձնացվող ամենաբարձր կարգի զբոսաշրջային տարածքային միավորն է: Զբոսաշրջային համաշխարհային կազմակերպության կողմից առանձնացվում է 6 Զ.մ./խ.տ.՝ Եվրոպա, Ամերիկա, Ասիա-Խաղաղօվկիանոսյան, Աֆրիկա, Մերձավոր և Միջին Արևելք, Հարավային Ասիա: Սրանք, իրենց հերթին, բաժանվում են զբոսաշրջային ռեգիոնների/տարածաշրջանների:

10. Զբոսաշրջային շրջան: Զբոսաշրջային համալիրների խումբ է՝ միավորված զբոսաշրջային տնտեսության ընդհանուր տարածքային կառուցվածքով: Առանձնացվում են զբոսաշրջային ռեգիոնների/տարածաշրջանների սահմաններում:

11. Զբոսաշրջային ռեգիոն (տարածաշրջան): Իրենից ներկայացնում է տարածքային-զբոսաշրջային համակարգ, որը բաղկացած է մի քանի զբոսաշրջային շրջանից՝ միավորված աշխարհագրական, պատմական և զբոսաշրջային-ռեսուրսային գործոններով: Առանձնացվում են զբոսաշրջային մակրոռեգիոնների/խոշոր տարածաշրջանների սահմաններում:

12. Զբոսաշրջային ռեսուրսներ: Բնակլիմայական, սոցիոմշակութային, պատմական, ճարտարապետական, հնէաբանական, գիտական, պաշտամունքային և այլ բնույթի օբյեկտներ կամ երևույթներ, որոնք ունակ են բավարարել մարդու պահանջմունքները զբոսաշրջության գործընթացում և զբոսաշրջության նպատակներին համապատասխան:

13. Զբոսաշրջություն: Ազատ ժամանակ մարդկանց ժամանակավոր տեղաշարժն է մշտական բնակության վայրից դեպի այլ վայր՝ զվարճանքի, հանգստի, բուժման, հյուրընկալման, ճանաչողական, կրոնական, գործնական նպատակներով, առանց այցե-

լության վայրում վճարովի աշխատանքով զբաղվելու: Նվազագույն տևողությունը 24 ժ է՝ առնվազն 1 գիշերակացով՝ բնակության վայրից դուրս, առավելագույն տևողությունը՝ 365 օր:

14. Լեռնակլիմայական կուրորտ: Կուրորտների տեսակ, որտեղ բուժման և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործվում են տվյալ տարածքի նպաստավոր լեռնային կլիմայական պայմանները:

15. Կլիմայական կուրորտ: Կուրորտների տեսակ, որտեղ հիվանդությունների բուժման և կանխարգելման նպատակով օգտագործվում են բուժիչ, առողջարար կլիմայական պայմաններն ու գործոնները:

16. Կլիմայաբուժություն: Հիվանդությունների բուժումն ու կանխարգելումն է նպաստավոր կլիմայական պայմանների, գործոնների (ջերմություն, խոնավություն, արեգակնային ճառագայթման ինտենսիվություն և այլն) ու հատուկ կլիմայաբուժական պրոցեդուրաների միջոցով:

17. Կոմունալ-կենցաղային ծառայություններ: Բնակչության մատուցվող առօրյա նյութական բնույթի ծառայություններ են՝ ուղղված բնակչության հարմարավետ կեցության ապահովմանը: Այս խմբին են դասվում սառը և տաք ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրա- և գազամատակարարման, ջեռուցման, վերանորոգման, տեխնիկական սպասարկման, վթարների և անսարքությունների վերացման ծառայությունները:

18. Կուրորտ: Բուժական և պրոֆիլակտիկ-կանխարգելման նպատակներով օգտագործվող, հատուկ պահպանվող տարածք, որտեղ առկա են բնական բուժական ռեսուրսներ, դրանց շահագործման համար անհրաժեշտ կառույցներ, շինություններ, ենթակառուցվածքային ցանց: Տեսակներն են՝ բալնեոլոգիական, ցեխային, լեռնակլիմայական:

19. Սանիտարա-առողջարանային զբոսաշրջություն:

Մարդկանց տեղաշարժն է պետության ներսում կամ նրա սահմաններից դուրս նվազագույնը 24 ժամով և առավելագույնը 6 ամսով՝ կազդուրման, հիվանդությունների կանխարգելման և բուժման նպատակներով:

20. Սանիտարա-առողջարանային ծառայություններ:

Ծառայությունների հատուկ խումբ է՝ ուղղված սպառողների համար հանգստի և առողջության վերականգնման հնարավորության ապահովմանը՝ առավել նպաստավոր ռեկրեացիոն շրջաններում:

21. Սերվիսաբանություն: Գիտության համալիր ճյուղ, որը զբաղվում է սերվիսային գործունեության ուսումնասիրությամբ, տալիս է ծառայությունների մատուցման գործընթացի տեսական հիմքերը:

22. Սերվիսային գործունեություն: Հատուկ տեսակի գործունեություն է՝ ուղղված ծառայությունների մատուցման միջոցով մարդկանց պահանջմունքների բավարարմանը

23. Սերվիսի աշխարհագրություն: Հասարակական-աշխարհագրական գիտություն, որի ուսումնասիրության օբյեկտն է սպասարկման ոլորտը, իսկ առարկան՝ սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը, դրա առանձնահատկություններն ու օրինաչափությունները, ինչպես նաև տարածքային կազմակերպման գործընթացի արդյունքում ձևավորված սպասարկման տարածքային համակարգերը: Ձևավորվել է հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրության և սերվիսաբանության սահմանային ոլորտում:

24. Սոցիալ-մշակութային ծառայություններ: Ուղղված են մարդկանց հոգևոր, ինտելեկտուալ պահանջմունքների բավարարմանը, սպառողի նորմալ կենսագործունեության ապահովմա-

նը: Այս խմբին են դասվում ծառայությունների բազմաթիվ տեսակներ, որոնց շարքում հատուկ տեղ են զբաղեցնում գիտակրթական, մշակութային, առողջապահական, զբոսաշրջային և էքսկուրսիոն, հյուրանոցային, սանատոր-կուրորտային ծառայությունները:

25. Սպասարկման ոլորտ: Բնակչությանը նյութական և սոցիալ-մշակութային ծառայություններ մատուցող ձեռնարկությունների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց ամբողջությունն է: Տնտեսական գործունեության ոլորտներից է: Հոմանիշներից են՝ ծառայությունների ոլորտ, տնտեսության 3-ային հատված:

26. Սպասարկման ոլորտի տարածքային համակարգ: Որոշակի տարածքում սպասարկման ձեռնարկությունների և կենտրոնների փոխկապակցված ամբողջությունն է՝ միավորված ընդհանուր ենթակառուցվածքային-կոմունիկացիոն համակարգով:

27. Սպասարկման շառավիղ: Սպասարկման հաստատության և հաճախորդների նպատակային սեգմենտների բնակության շրջանների միջև եղած հեռավորությունն է: Կարող է չափվել ինչպես տարածության, այնպես էլ ժամանակային միավորներով: Ամենօրյա կամ պարբերական ծառայություններ մատուցող հաստատությունները կունենան համեմատաբար կարճ սպասարկման շառավիղ՝ տեղաբաշխվելով սպառման շրջաններին հնարավորինս մոտ: Իսկ բացառիկ կամ հազվադեպ ծառայությունների պարագայում Ս.շ.-ն համեմատաբար երկար է:

28. Սպասարկում (սերվիս): Հաճախորդների պահանջմունքների բավարարման նպատակով նրանց ծառայությունների մատուցումն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 1979, 720 էջ:
2. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 6, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 1980, 720 էջ:
3. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 7, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն, Երևան, 1981, 720 էջ:
4. Մանասյան Մ. Գ., Հասարակական-աշխարհագրական հետազոտությունների մեթոդները, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2008, 260 էջ:
5. Մանասյան Մ. Գ., Սպասարկման ոլորտի աշխարհագրական հետազոտության հիմնական խնդիրները, «Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը» (Լ. Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակներին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2011, էջ 93-100:
6. Սարգսյան Տ. Ա., Սերվիսի աշխարհագրություն. բովանդակությունը, տեղը գիտությունների համակարգում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», №1-2, Երևան, 2012, էջ 80-83:
7. Վալեսյան Լ. Հ., Հասարակական աշխարհագրության ներածություն, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1999, 227 էջ:
8. Абрамов М. А., География сервиса, «Мысль», М., 1985, 225 с.
9. Александрова А. Ю., Международный туризм, «Аспект Пресс», М., 2001, 464 с.
10. Вольский В. В. (ред.), Социально-экономическая география зарубежного мира, «Дрофа», М., 2004, 560 с.
11. Максаковский В. П., Географическая картина мира (книга 1), «Дрофа», М., 2008, 495 с.
12. Максаковский В. П., Географическая картина мира (книга 2), «Дрофа», М., 2009, 480 с.
13. Пирожник И. И., Основы географии туризма и экскурсионного обслуживания, «Университетское», Минск, 1985, 253 с.
14. Романович Ж. А., Калачев С. Л., Сервисная деятельность, «Издательско-торговая корпорация «Дашков и Ко», М., 2008, 268 с.

15. Самойленко А. А., География туризма, «Феникс», Ростов-на-Дону, 2006, 368 с.
16. Саргсян Т. А., О некоторых методах географических исследований сферы обслуживания, «Геополитика и экогеодинамика регионов» (научный журнал), том 10, выпуск 2, Симферополь, 2014, ст. 215-218.
17. www.armstat.am (ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք)
18. www.yerevan.am (Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք)
19. www.hrazdan.am (Հրազդանի քաղաքապետարանի պաշտոնական կայք)
20. www.wikipedia.am
21. www.genocide-museum.am (Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կայք)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
1. Դասընթացի ծրագիրը և կառուցվածքը 5
2. Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության և դասավանդման մեթոդները 17
3. Գործնական պարապմունքների կազմակերպման օրինակներ և ցուցումներ 22
3.1. Սերվիսային գործունեության և սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունները 23
3.2. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը 26
3.3. Սերվիսի աշխարհագրությունը՝ որպես գիտություն 29
3.4. Սերվիսի աշխարհագրության հետազոտության մեթոդները 34
4. Ուսումնական պրակտիկայի երթուղիների նախապատրաստման և անցկացման ցուցումներ 40
4.1. Ուսումնական պրակտիկան Երևանում 41
4.2. Ուսումնական պրակտիկան ՀՀ մարզերում 49
Հավելված 1
Ընթացիկ քննության թեստային առաջադրանքների նմուշ-առաջարկներ 59
Հավելված 2
Համառոտ մասնագիտական տերմինաբանական բառարան 63
Օգտագործված և առաջարկվող գրականության ցանկ 69

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՍԵՐՎԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Հ. Ասլանյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 4.5:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2014